



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1999/177

# ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա. ՊՐԱԿ

ՄԻՋՆԱԴՐԵԱՆ ՀԱՅՈՑ ՏԱՂԵՐ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

*Առաջին անգամ հրատարակեց*

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ  
1892

Մակ  
433

# ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա. ՊՐԱԿ

ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ՀԱՅՈՑ ՏԱՂԵՐ ՈՒ  
ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

ԱՌՆՔԻՆ ԱՆԳՍՏ ԿՐԱՏԱՐԱԿԵՑ

ԿԵՐԵՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ТИФЛИСЬ.

Типография И. МАРТИРОСЯНЦА, Орбелиановская улица д. № 1—2

1892



Լոյթներ, որոնք պատմագրական չիշատակարաններում շատ հազիւ են նկարագրւում: Մեր խօսքն այն տաղերի ու ոտանաւորների վերայ է, որոնց անպաճոճ և զրեթէ կոպիտ ձեւից անշուշտ կրէրտնին արդի յստակասէր ճարտասանները և նորելութ բանաստեղծները. և սակայն նոցա բովանդակութեան հետաքրքրութիւնը կարող է չափշտակութիւն գրգռել ամէն մի հայի մէջ, որ կ'ուզենար մի փոքր էլ աշխարհացին կենցաղավարութեան մասին խօսեցնել իւր պապերին: Ահա տիրացուներն ու երգիչները Քրիստոսի Ծննդեան Աւետիար երգելու ժամանակ արդէն հեռանում են կրօնական աշխարհից և շօշափում են կենցաղական խնդիրներ. նոքա երգի միջոցով աղցաւոր կեանքի առօրեաց կռիւն են մղում հայ պառաւի կամ նորա «հարմուկի» հետ: Ահա Յովհաննէս եպիսկոպոսը օտար երկրում նկարագրում է երգով իւր հայրենիքի թռչուններին, Ղաւիթ Յալաձորեցիին խօսք չի գտնում լիւրի պատկերացելու հայրենի ծաղիկների բազմազանութիւնը, Ղազարն սքանչացած է իւր սիրականի «ձով» աչքերի վերայ. Տերունի պանդուխտ Մինաս Թոխաթեցին 1563-ին Իլով քաղաքում ջերմ կարօտով գովում է իւր հայրենիքի հէրիսան. Փարտիրոսը գրուատում է իւր «չ'ախուն», Առաքելը իւր թաշկինակը. մէկը գանգատում է իւր ատամներից, միւսն իրեն անհանգիստ անող ճանձերից, երրորդն յայտնում է իւր զգուանքը ճխախտուից. ծաղում են, ճիճաղում են, խորամանկ աղուէսին, ազահ գայլին, անտաշ արջին ձեռք են առնում, այլաբանօրէն մտրակելով, ի հարկէ, մարդկանց: Գարունն ու Հայոց գատիկը, սոխակն ու վարզը, ծառն ու ծաղիկը, խաղողն ու դինին, սէրն ու գեղեցկութիւնը, և առհասարակ ամէն մի հանօջք կամ դառնութիւն, որ լոկ աշխարհացին է, կարծես կենդանանում է մեր աչքի առաջ այնպէս, ինչպէս ըմբռնել էին մեր նախնիք, իրենց իսկ խօսքերով:

Էլ չենք չիշում այն, որ մեր առաջարկած նիւթերի հանդէս գալովը շատ ընդարձակուում են մեր տեղեկութիւնները հայոց հին բարբառների նկատմամբ. մենք լսում ենք այժմ մեր սկանջին խորթ միւսնոցն ժամանակ մեր մտքին և հաստողութեանը մատչելի մի բարբառ, որ շատ տարբեր է գողտրիկ զրաբառից և ժողովրդական է եղել մի օր:

Թողնէնք ուրեմն, որ մեր ձեռնարկութիւնն ինքը խօսի իրեն մասին. անցնենք այժմ մի այլ հանդամանքի: Մենք պէտք է արձանագրենք յայտեղ այն, որ անմշակ նիւթեր հրատարակելու երևոյթը նոր չէ մեզանում: Դեռ քառասնական թուականներից սկսած մեր պարբերական թերթերը, որոնց մէջ առաջին տեղը պատկանում է անշուշտ Վենէտիկի Բագմավէպին, ժամանակ առժամանակ հրատարակ են հանել շատ ուրիշ չիշատակարանների հետ միասին և հին տաղեր ու ոտանաւորներ: Եղել են և մասնաւոր անձինք, որոնք առանձին հրատարակութիւններով նպաստել են այդ գործին. այդպիսիների մէջ յայտնի են Ն. Ղեռնդ Ալիշանեան և Ն. Գարեգին Սրուանձտեան, որոնք տուել են մեզ բաւական նիւթեր հայոց հին բանաստեղծութեան պատմութեանց համար: Սակայն ամէնից աւելի ուշագրութեան արժանի է այդ մասում Ն. Արիստակէս Տէվկանցի խմբագրած հայերգը, որ 1882-ին լոյս տեսաւ Թիֆլիզում պ. Աբգ. Յովհաննիսեանի խմբագրութեամբ. այդ գործը մի շատկական ժողովածու է հին քերթուածների և տաղերի, որ միշտ ունենալու է իրեն նշանակութիւնը նիւթերի առատութեան և նորութեան պատճառով: Չենք կարող սակայն լռութեան տալ այն, որ մեր չիշած հրատարակութիւնները շատ սակաւ բացառութեամբ լոյս են տեսել կարծես պատահաբար, այդ պատճառով ոչ միայն կցկտուր, թերի և անձիշդ են նոքա, այլ զանազան հրատարակութիւնների մէջ շատ ցրիւ բնկած լիւնելու պատճառով նաև անմատչելի. և որ ամէնից կարևորն

է, անմշակ նիւթերի աղբիւրը, նոցա գրուած է կամ ընկ-  
 օրինակման ժամանակը մեծ մասով չիշատակուած չէ և  
 ընդհանրապէս անտուայգ է: Այսպիսով կարող են յառաջ  
 գալ թիւր և անհաստատ կարծիքներ նոցա ճագման և  
 ժամանակի մասին. զորօրինակ «Մարտն կուզայր ճաղկը-  
 ներով» կամ «Վառնիկ ուստի կուզաս» երգերի մասին մենք  
 այժս հաստատապէս կարող ենք ասել, որ հին են, որովհետեւ  
 ժի դարի տաղարաններում կան. գոնէ չենք կարող ասել,  
 որ նոքա յօրինուած են ժի. դարի վերջերում կամ ժԼ,  
 դարում. կամ թէ Աւետիս երգելու և ճրագալուցցի երեկո-  
 չին տները ման գալու և նուէրներ ժողովելու սովորու-  
 թեան մասին հաստատ կարող ենք ասել, որ հին է. կամ  
 հէրիսա պատրաստելու և իբրև մատող բաժնելու աւան-  
 դութեան մասին կարող ենք ասել, որ դեռ ժՔ. դարումն  
 էլ է չիշուում, և այլն: Իսկ այս ամէնին կըջաջորդէ մի  
 գիտակցական ուսումնասիրութիւն Հայոց ընտանեկան ծէ-  
 սերի, սովորութիւնների և աւանդութիւնների, որոնց վե-  
 րաբերութեամբ այնքան պակասաւոր են դրական տեղե-  
 կութիւններ մեր արդի բանասիրութեան մէջ, որ ամէն մի  
 չնչին յայտնութիւն կամ լուսաբանութիւն առանց նշա-  
 նակութեան մնալու չէ:

Եթէ անմշակ նիւթեր ժողովելու և հրատարակելու  
 գործին մեր տկար ոչթերով մի նոր գարկ տուած լինինք  
 սոյն հրատարակութեամբ, այն ժամանակ մենք մեզ բա-  
 րոյապէս վարձատրուած կըհամարենք: Իսկ մեր նոր ձեռ-  
 նարկութեան թերութիւններն ուղղելու գործը կըմնայ  
 հետեւեալ պրակների մէջ կատարելու հետզհետէ:

Առաջժմ այսքան:

Կ. Ա.

Յ Ա Ն Կ

	Ձեռ. տաղարան
1 Աւետիս «Ասող մի ելաւ» . . . . .	1695 թ.
2 Աւետիս «Այսօր ճնաւ» . . . . .	նոյն.
3 Աւետիս «Այս թագաւորս կուսածին» . . . . .	1623 թ.
4 Աւետիս՝ Յիսուսի մանկութիւնը . . . . .	1695 թ.
5 «Վասն գնալոյ յԵղիպտոս և տղաչութեան և սքանչելեացն Քրիստոսի» Ղազար Ստամբուլցի	նոյն
6 Աւետիս՝ Նաւապարս . . . . .	նոյն
7 Վասն Զուղայեցի Նազարէթին . . . . .	նոյն
8 «Վասն Էջմիածնայ նուիրակներուն» Յովհաննէս բահանայի . . . . .	նոյն
9 «Յաղագս քաղաքին Ամասիու» Մարտիրոս Ղրի- մեցի . . . . .	նոյն
10 Վասն թուչնոց, Յովհաննէս Եպիսկոպոս, 1680 և 1695 թ.	
11 Ի վերայ աղուէսին . . . . .	1695 թ.
12 Տաղ սիրոյ «Նաղլու տիլբարս», Ստեփաննոս	1647 թ.
13 «Առաւօտուն քամեկն», Օքսիդ տէրտէր . . . . .	1695 թ.
14 «Վասն հէրիսի», Մինաս Թոխաթցի . . . . .	նոյն
15 Վասն ակուաջի . . . . .	նոյն
16 Վասն ուրախութեան . . . . .	նոյն
17 Ի վերայ ճանճի . . . . .	1695 թ.
18 Վասն թիւթիւնի . . . . .	նոյն
19 Տաղ գեղեցիկ ազնիւ . . . . .	նոյն

Մ Մ Ա Յ

Մայրաքան . 108

Յ 1081 . . . . . 1

Յ 1082 . . . . . 2

Յ 1083 . . . . . 3

Յ 1084 . . . . . 4

Յ 1085 . . . . . 5

Յ 1086 . . . . . 6

Յ 1087 . . . . . 7

Յ 1088 . . . . . 8

Յ 1089 . . . . . 9

Յ 1090 . . . . . 10

Յ 1091 . . . . . 11

Յ 1092 . . . . . 12

Յ 1093 . . . . . 13

Յ 1094 . . . . . 14

Յ 1095 . . . . . 15

Յ 1096 . . . . . 16

Յ 1097 . . . . . 17

Յ 1098 . . . . . 18

Յ 1099 . . . . . 19

Յ 1100 . . . . . 20

.ա մասն եկեր ի վրայ  
 .ա մարտագու մանգ մմն  
 .ա դասարանք մ դարասթ մոց իմ  
 .ա միջրազ մշմարի մանգ մմն  
 .ա մոլեխոսմու վ ռան դժ ին  
 .ա մմն  
 .ա մոլեխոսմու վ ռան լազա ին

1. Ա Ռ Ե Տ Ի Ս.

Աստղ մի ելաւ ի Հնդստան, աւխտիս  
 .ա միլամա  
 իմաստասէրքն զարհուրեցան ա.  
 .ա  
 Աստղաբաշխերք ժողովեցան ա.  
 .ա միլա րդ  
 Հատ քննեցին և Հիացան ա.  
 .ա միլան  
 Յիւրեանց միջոյն ձեր մի գտան ա.  
 .ա  
 Թևն մտին առին և՛ ելան ա.  
 .ա միլա տի  
 Երբ որ ի յաստղն հայեցաւ ա.  
 .ա միլա րա  
 Կն կուրացեալ աչքն բացաւ ա.  
 .ա միլա  
 Մեկըն, Գասպար և Պաղտասար ա.  
 .ա  
 Հատ հեծելով ճանփալ մտան ա.  
 .ա  
 Եւ այն աստղն առաջնորդէր ա.  
 .ա  
 Յերուսաղէմ հասուցանէր, ա.  
 .ա  
 Երբոր յերուսաղէմ մտան ա.  
 .ա  
 Քաղաքացիք զարհուրեցան ա.  
 .ա  
 Եւ Հրէայքն ժողովեցան ա.  
 .ա  
 Վասն Յիսուսի հարցունք եղան ա.  
 .ա  
 Եւ զայն ճուլապն լիմացան ա.  
 .ա  
 Թաղտոր ծնեալ ի Հրէաստան ա.  
 .ա  
 Գարձեալ այն աստղն երևէր ա.  
 .ա  
 Ի Բէթղէէմ հասուցանէր ա.

Երբոր ի Բէթղէէմ մտան ա.  
 Ամենեքեան ուրախացան ա.  
 Մելքոն, Գասպար և Պաղտասար ա.  
 Ամենեքեան զգանձն բացին ա.

Թէ ծեր մտաւ ի տեսութիւն ա.

Նա ծեր տեսաւ իւր նմանի ա.

Թէ տղայ մտաւ ի տեսութիւն ա.

Նա տղայ տեսաւ իւր նմանի ա.

Ի դուրս գային, զարմանային ա.

Եւ զտեսիլն պատմէին ա.

Յիւրեանց միջին խորհուրդ արին ա.

Յետոյ կրկին ի ներս մտին ա.

Երեքն միաբան մտին ա.

Տղայ տեսին ի գիրկ Կուսին ա.

Ուրախութեամբ երկիրպագին ա.

Եւ զնացին լիւրեանց տեղին ա.

## 2. Ա Ի Ե Տ Ի Ս

Այսօր ծնաւ Արքայն երկնից ա.

Եւ Արարիչն բոլորից ա.

Զձեզ պահէ ի չար ախտից ա.

Եւ ի դիւացն վտանգից ա.

Խաթուն մարիկ, արի ի վեր ա.

Յոճիւի եղերդ մի ննջեր ա.

Յարի, գնա յանկիւնն ի վեր ա.

Զմեր նասիպն շուտով բեր ա.

ա խոյօձ յա ընկեր ունիմք մեք քահանայք ա.

ա յճայս մի Խարի մանկուսք և սարկաւագ ա.

ա յճայս Երթամք, ուտեմք և լիանամք ա.

ա Զձեզ օրհնեմք և զձեր օրդիքն ա.

ա Խաթուն մարիկ, մի ծուլանար ա.

ա Սուտ և հոգցի մի խլանար ա.

ա միջոց Մսքին պառաւ մի տրտնջար ա.

ա Գէմ Գաբրիէլն ի քեզ տի գայ ա.

ա Ասնու երկար ճամփայ երթայ ա.

ա Քեզ պաշարի թէպտիր արա ա.

ա Ամ գու ի յով ելար գազան ա.

ա Հոգուդ չարկամ և այլոց դուշման ա.

ա միջոց Հարսնդ բարի պատուական ա.

ա միջոց Եւ քո օրդիքն են աննման ա.

ա Հարսնուկ միտք մի գներ խենդ պառվուդ ա.

ա միջոց Խելքն է կորեր, միտքն է մոլար ա.

ա միջոց ԶԱստուած չիշէ յարի ՚ի վեր ա.

ա Զմեր նասիպն մի կտրեր ա.

ա Եղբայր ամ գու խիստ նեղացար ա.

ա Իսկի հետ մեզ չի խօսեցար ա.

ա Եղբայր ես քեզ եմ բարեկամ ա.

ա Եկեր եմ քեզ խրատ կուտամ ա.

ա Գու ի մեզնէ մի վախենար ա.

ա խոյս Եմք չեմք ընկնիլ յերգիքն ի վայր ա.

ա դրա Ի՞նչ կուխօսիք ընդ մեզ քէնով ա.

ա դա Գէմ չեմք ի ձեր գաթին ապով ա.

ա միջոց Զնոյն չառաք գէմ ձի թամպով ա.

- .ա ցլամաքս Ալ մէկ գաթայի գայն ալ ճօրով ա.
- .ա բա Աստուած գայս տունս ի շէն պահէ ա.
- .ա ցնա Ու գշէն պահողքն ապրած պահէ ա.
- .ա մգլ թող ձեր սեղանն բոլորի ա.
- .ա Կթխան ի մէջ գինով ի լի ա.
- .ա Չեր բարեկամքն ուրախանան ա.
- .ա Զարկամքն ի դուռն պատուին ա.
- .ա լար Ալէլուիա ալէլուիա ա.
- .ա լա Օրհնեմք զՏէրն վերնական ա.
- .ա մղա յիսրայիլ յիսրայիլ բնի.
- .ա մարար Յ. Ա Ի Ե Տ Ի Ս.
- .ա մանչոր բոլսս ի սոյզաչ բոլորս.
- .ա մալս Այս թագաւորս կուսածին ա.
- .ա մանմ Չեղ պարգևէ զանձառ բարին ա.
- .ա բոլիոսաք բ Ջձեր սեղանն զարդարէ ա.
- .ա դայոն ի մգ Որպէս դուրբ նահապետին ա.
- .ա զմի Այս նորածին Տէրն և Արքայն ա.
- .ա Օրհնէ զձեզ զամենեսեան ա.
- .ա Սիրելեօք բարեկամօք ա. զյազրժ
- .ա Եւ զընտանիս ձեր միաբան ա.
- .ա նա Չեր կեռաւորն գայ շուտով ա.
- .ա նա Եւ ձեր ոչխարն ցտուրուով ա.
- .ա Ասրածան ձեր լցուի գինով ա.
- .ա զաի յ Եւ տունս ձեր կահար բարւով ա.
- .ա խոմ յ Այսօր մեր Տէրն երկնից ի վաչր ա.
- .ա խոբա խոնարհեցաւ մարդոյս համար ա.
- .ա խոբն Օրհնէ գայս տանս տանուտէրն ա.

- Եւ զընտանիքն հաւասար ա.
- .ա Այսօր ծնաւ երկնից Արքայն ա.
- .ա զմմն Եւ Աբարիչն բոլորից ա.
- .ա յրմ Օրհնէ զերամք քահանայից ա.
- .ա լամա Որ միշտ անխորձ կենան յախից ա.
- .ա Այսօր ծնաւ Քրիստոս Աստուած ա.
- .ա Վասն մարդկան երկրաւորաց ա.
- .ա Օրհնէ զՉուկք սարկաւագաց ա.
- Եւ ազատէ ի փորձանաց ա.
- Այսօր ծնաւ Տէրն տէրանց ա.
- Ի փրկութիւն մեղաւորաց ա.
- Չեղ ողորմի և ձեր նախնեացն ա.
- Եւ աննայն ուղղափառացն ա.
- .ա զար Տայ ձեր բարեացն լիութիւն ա.
- .ա լա Ս Եւ ձեր որդւոցն առողջութիւն ա.
- .ա լա յր Ննչեցելոց ձեր ողորմի ա.
- .ա լա Ս Եւ պարգևէ արքայութիւն ա.
- . . . Գիտեմ, որ խիստ էք ձանձրացեր ա.
- .ա լա Ս Ի յալլազկեացն էք նեղացեր ա.
- Խաթուն մաբիկ, արի ի վեր ա.
- .ա մանչոր Ի թոնտրեղերն մի ննջեր ա.
- .ա զմմ Սրի գնա յանկիւնն ի վեր ա.
- .ա զ Գէրգէր գաթայ և չոր միս բեր ա.
- Խաթուն մարիկ մի ծուլանար ա.
- Սուտ և հոգցի մի խլանար ա.
- .ա զարմնա Աշխարհս քեզ գէմ չի մնար ա.
- .ա լա Ս Մենք այս ցրտոյս չեմք գիմանար ա.

Այս օրո՞ւմ են խորհուրդ ունի ա.

Արև, մեզ բեր անուշ զինի ա.

Խմեմք, օրհնեմք զՏէրն ամենի ա.

Եւ ողորմիս տանք մենք ձեզի ա.

Ընկեր ունիմք մենք քահանայ

Ֆարիմանկունք և սարկաւազ ա.

Երթանք ուտենք, որ լիանանք ա.

Զձեզ օրհնեմք, որ թուրանաք ա.

Ո՛վ եղբայր և քաղցրաձայն եղանակող բանիս,  
ամէն տարի բարով հասնիս. այն տունն որ  
լրք մի չտան և պարապ հանեն, նա ապա  
զայս տոա.

Մօքին պառաւ մի տրտնջար ա.

Իէմ Դաբրիէլ քեզի տի դայ ա.

Առնու, յերկար ճանփայ երթայ ա.

Քեզի պաշրի թէպտիր արա ա.

Հարսդ բարի և աննման ա.

Եւ քօ որդիքն են պատուական ա.

Ամ գու ի յով ելար զազան ա.

Հոգուդ չարկամ ՚ը այլոց դուշման ա.

Հարսնուկ պառուղ մտիկ մաներ ա.

Խեղքն է կորել միտքն է ցրուեր ա.

ԶԱստուած յիշէ, արի ի վեր ա.

Զմեր նախիպն մի կտրեր ա.

Եղբայր ամ դու խիտ տրտմեցար ա.

Իսկի հետ մեզ չխօսեցար ա.

Դու ի մենէ մի վախենար ա.

Մենք չենք ընկնիր երդիքս ի վար ա.

Եղբայր ես քեզ եմ բարեկամ ա.

Եկեր եմ քեզ խրատ կուտամ ա.

Գաթին համար թէ բարկացար ա.

Եկո՛, որ քեզ ջուալ մի տամ ա.

Մեք ձեզ խրատ կուտանք սիրով ա.

Եւ օրհնեցաք հազար բարով ա.

Ի՞նչ կուխօսիք հետ մեզ քէնով ա.

Իէմ չենք ի ձեր զաթան յագով ա.

Պառաւն ի դուրս կուտայ հովհով ա.

Հարսն կընկնի ի քովէքով ա.

Չեզնէ չառաք դէմ ձի թամպով ա.

Այլ մէկ գաթայ զայն ալ ճորով ա.

Ամէն տարի հասնիք բարով ա.

Յերկար կենօք և անողջ անձով ա.

Մի կենօք հետ մարդուն խնով ա.

Եւ մի նայիք խիտ խորուով ա.

Ողորմութիւն արէք սիրով ա.

Եւ խօսեցէք անուշ լեզուով ա.

Եւ մենք զձեզ օրհնեմք սիրով ա.

Որ դուք մնաք երկար ամով ա.

ԴՄենք կուզանք մեր ընկերօքն ա.

Եւ դուք մնաք խաղաղ կենօք ա.

.ա դասձգոյի վն յճնն յ ասր  
 .ա դախ յ սգլորդ 4. Ս Ի Ե Տ Ի Ս.  
 .ա ետլմզգոյ եմ բնգ. սմ պարթ  
 .Օրհնեալ է Հայր, օրհնեալ Որդին, աւետիս.  
 .ա Օրհնեալ է սուրբ Կոյսն ի յայրին ա.  
 .Ծնաւ երբը զՅիսուս որդին ա.  
 .ա իողոյս Ի խանձարուբոն պատեցին ա.  
 .ա իո Ի յանբանից մտուր եղին ա.  
 .ա ի Կետ Յորդանան մկրտեցին ա.  
 .ա իո Ի Յովհաննու գիրկն գրին ա.  
 .ա ի Երուսաղէմ Ջանուն Յիսուս Տէր օրհնեցին ա.  
 .ա իող յի Կեա չէր եղեր երեք աւուր ա.  
 .ա իողման յի Ինք Հետ իւր մօրն խօսեցաւ ա.  
 .ա իողոճ յա Տար զիս ի վանք, տար զիս ի վանքն ա.  
 .ա իո Երթամ անեմ աշկերտութիւն ա.  
 .ա ի Մարիամ զնա վանքն տարաւ ա.  
 .ա ի Թէ տանիմ տամ աշկերտութիւն ա.  
 .ա Երբ զայլուբենն զրեցին ա.  
 .ա Եւ զսաղմոսն կուկարդայր ա.  
 .ա Երբ զսաղմոսն զրեցին ա.  
 .ա Եւ զշարականն կուպաշտէր ա.  
 .ա իո Երբ զշարականն զրեցին ա.  
 .ա մգօգմ Ջաւետարանն կուպատմէր, ա.  
 .ա զօմ Ջինչ Հաբեղայք վարդապետայք ա.  
 .ա Ջերար զային տրտնջային ա.  
 .ա Թէ այս չանէ աշկերտութիւն ա.  
 .ա Իս մեզ կ'անէ վարպետութիւն ա.

433

43 ՅԱՅԳԻՈՅԵՂ Զաւակործն վարձեցին ա. ՅԱՍԻ ԵՇ  
 :ՅՈՂՄՍ յՅՈՒ Ի Մարիամն զրեցին ա. ՅՅՅՅՅՅՅՅ  
 Թէ արեկ սու զքո որդին ա.  
 .ա Իս մեզ չաներ աշկերտութիւն ա.  
 .ա մգմաճարոս Իս մեզ կ'անէր վարպետութիւն ա.  
 Մարիամ առնոյր զՅիսուս որդին ա.Ս  
 Երթայր ու լայր ճանապարհին ա.  
 «Մարիամ մի լար, մի լար ա.  
 Զայս օգնութիւն, որ ես ունիմ ա.  
 Զկազն ու զկոյրն ի լոյս բերեմ ա.  
 Զանդամայոյճն բժշկեմ ա.  
 ԶՆրուսաղէմ քաղաք շինեմ ա.  
 Զկաթն աղբիւր բղխեցնեմ ա.  
 Ի Յիսուսէ ի Քրիստոսէ ա.  
 Օրհնած է տանս տանուտէրն ա.  
 Ի Սառայէ ի Մարթայէ ա.  
 Օրհնած է տանս տանտիկին ա.  
 Ի Պետրոսէ ի Պօղոսէ ա.  
 Օրհնած է տանս տղակներն ա.  
 Աստուած զայս տունս շէն պահէ ա.  
 Զշէն պահողքն ապրած պահէ ա.



5. ՎԱՍՆ ԳՆԱԼՈՅՅ ՅԵԳԻՊՏՈՍ, ԵՒ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԵԱՅՆ ԲՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅՆ ՄԵՐՈՅ:

«...մի քոս ոգր սոս ինչա իմ»  
 «...Հրեշտակն երևեցաւ Յովսէփայ Հիւսին  
 «...Եւ մաքուր միշտ կուսի սուրբ Աստուածածնին.  
 «...Ուզարկեաց զնոսա ի լեզիպոսսին,  
 «...Զի Հերովդէս խնգրէ կոտորել զմանկտին:

«...Առիւծքն որ ի վերայ դրան քաղաքին,  
 «...Գոչէին թէ «եկաւ մեծ արքայ որդին»  
 «...Զոր և Հեծեալ զինուք ելեալ խնդրէին,  
 «...Իսկոյն տեսին զնա և ոչ զիտէին:

«...Եղիազար անուն ընդունի զնոսին,  
 «...Թէ ես եմ աշխարհէ Հրէաստանէ.  
 «...Տարեալ զնոսա ի տուն, տեսաւ զսքանչելին,  
 «...Թէ ջուր լուաց զմանուկն Յիսուս միածին,  
 «...Յորմէ ծառն բուսաւ իւղ պալատանին,  
 «...Եւ Ղազար որդի էր Եղիազարին:

«...Գնաց Յիսուս ետես զտաճարն Ապողին,  
 «...Եւ բազմութիւն մարդկան կուօցն ՚ի զոհին  
 «...Ոսկով զարդարեալ զեր կայր ի վերայ  
 «...բազնին  
 «...«Ապողոն արարիչ է ամենայնին».  
 «...Իսկ Յիսուս «Հայր» կոչեաց յերկինս լալագին,  
 «...Կործանեցաւ տաճարն և զոր անդ կային.  
 «...Եւ դեքն զաղաղակ բարձեալ ասէին.  
 «...«Տղայ մի կործանէ զմեզ զամենեսին».



«...միջոցն Եւ Մարիամ անկաւ առ յոտսն Յիսուսին,  
 «...Որ և կենդանացոյց զվեց Հարիւր Հոգին.  
 «...Անկան առ յոտս տղայ Յիսուս միածնին  
 «...Եւ որդի Աստուծոյ խոստովանէին:  
 «...Բազում անթիւ Հրաշք, որ ի տղայութեան,  
 «...Գործեաց Յիսուս ի մէջ խաղու տղային:  
 «...Խորհուրդ արաւ Յովսէփ ընդ Մարիամին,  
 «...Տարեալ զՅիսուս ետուն ուսումն գրին  
 «...Ու մեծ Բամաղիէլ յօրէնս Մովսէսին.  
 «...Եւ նա գրեալ տախտակ և ետ ի ձեռին,  
 «...Աւեր Բամաղիէլ զանունն գրին,  
 «...Պատասխանեաց Յիսուս իւր վարդապետին.  
 «...«Ես զանունքն ամենայն զիտեմ զգրին,  
 «...Բայց ասն զմեկնութիւնն թէ որպէս լինին»,  
 «...Զարհուրեալ վարդապետն ասաց Յիսուսին.  
 «...«Որդեակ իմ դու ասն զմեկնութիւնն գրին».  
 «...Ասաց թէ «գիր ասելն Աստուած թարգմանին,  
 «...Եւ բանն որ է անուն Որդին միածին.  
 «...Պէն և ի բանէն ապա խօսք յայտնին,  
 «...Ան է շնորհք Հոգւոյն սրբոյ ճշմարտին,  
 «...Բայց խորհուրդ ծածկեալ է Աստուծոյ խորին,  
 «...Մինչև այց արասցէ առ ի փրկութիւն»:  
 «...Յայնժամ Բամաղիէլ երկեաւ ի մտին.  
 «...Երկրպագեաց նմա ընդ խօսել բանին.  
 «...Տուր, Յովսէփ, մանուկդ քո միածին.  
 «...Իա է որդի շնորհաց չօր երկնաւորին:

Երթայ Յիսուս մտանէր տղայոց միջին,  
 Գազում ազգի ազգի հրաշք լինէին.  
 Եւ Յիսուս ձեռս եղեալ բժշկէր զնոսին:  
 Տղայոց մինն անկաւ ի յապառափին,  
 Հերձաւ ուղեղն, ի նոյն մեռաւ ի տեղին.  
 Լուեալ զատաւորին ըմբռնէ զնոսին,  
 «Յուցէք թէ ով ետպանզայն պատանին,  
 Նոքա զուր խօսեցան ի վերայ Յիսուսին,  
 Եթէ յօտարական տղայ մ' է ձերին,  
 Բռնեցին զՅովսէփ թէ «ցոյց քո որդին».  
 Եւ Յիսուս խրովի եկեալ մէջ նոցին:  
 Հարցան թէ «գո՞ւ սպաներ զանմեզ պա-  
 տանին».  
 Ասէ Յիսուս «Ես ոչ գիտեմ զնմին».  
 Նոքա ժողովեցան սուտ վկայեցին,  
 Թէ «սա բազում չարիս ածէ մեր միջին»:  
 Յիսուս բերեալ երեստ զմեռեալն ատենին,  
 Բարձրաձայն ետ զանուն մեռեալ տղային.  
 «Երիւ և յոտին կաց ասա՞ զձձարտին,  
 Թէ ով ընկէց զքեզ ի քարահոսին».  
 Իսկ նոյն ժամայն չարեաւ մեռեալն ի տեղին,  
 Եւ ճիճ բարձեալ ծնողաց զիրկս արկանէին.  
 «Որդեակ ով ընկէց զքեզ ի քարատակին»  
 Եւ նա ասաց անուամբ զիւր եղբորորդին:  
 Յայնժամ զահի հարան ընդ հրաշս նորին,  
 Եւ օրհնեն զարարողն երկնի և երկրի.

Ասեն թէ՛ սա չէ՛ ծնունդ հողածին,  
 «Ասա՛ Է՛ յերկնից իջեալ Բան աստուածային»:  
 Գնացեալ Տապարիայ քաղաքն մտին.  
 Անդ այր մի Խորայէլ անուն կոչէին.  
 Ետուն Յիսուս արուեստ ներկարարութեան  
 Եւ նա տարեալ եցոյց զզործն ներկին.  
 Ասէ. Որդեակ կացիր ի յայսմ տեղին.  
 Եւ ինքն գնացեալ բերել կերակրին.  
 Եւ Յիսուս ժողովեաց զամէն կտաւնին.  
 Եւ եզ ի մի կարաս, որ սեաւ ներկէին.  
 Զի լինելոց էր սեաւ, կապոյտ և դեղին,  
 Ոմն կանանչ, կարմիր որդան պիտանին:  
 Եկեալ վարպետն ետես ի սև կարասին,  
 Բարկացաւ. և Յիսուս փախեաւ ի նմին.  
 Եւ նա էառ զկոփիչն, ընկէց հետ նորին,  
 Նոյն ժամն արմատացեալ պտղով ի տեղին.  
 Եւ Յիսուս փախուցեալ ի վերայ ծովին.  
 Երթայր անթաց ոտիւք ի վերայ ծովին.  
 Յայնժամ զահի հարեալ ընդ հրաշս բանին,  
 Եմուտ եհան զկտաւան ի միջոյ կարսին.  
 Որպէս և տեարք նոցա որ գուն ուզէին  
 Սև և կապոյտ, կանաչ, կարմիր և դեղին:  
 Մինն ասէ. «կտաւոյս իմ ներկ ոչ պիտին».  
 Եհան զնորա իսպիտակ որպէս զառաջին:  
 Եւ որք զնա տեսին և կամ լսէին,  
 ԶԱստուած օրհնաբանեալ փառաւորէին:

Եղև Յիսուս ամաց երկոտասանին,  
 չմեղանա շրեշտակն երևեցաւ սուրբ Աստու-  
 ճան մզարայ յայգարաշ յածրածր ծածնին.  
 Ասաց. Ա՛ւ գմանուկն քո միածին  
 Եւ գնա՛ յաշխարհն Նազարէթին:  
 Եւեալ և երթալին ի ճանապարհին,  
 Ետես անդամալոյճ մի խիստ զայրագին.  
 Գթացաւ և յարուց գնա ի տեղին,  
 Եւ նա ողջ անդամօք գնալը ի տանին:  
 Ո՛վ կարէ բանք հրաշից մեկնել ի գրին,  
 Կամ ո՞ր լեզու կարէ պատմել սքանչելին.  
 Արարածս ոչ տանէր, զանբաւ բան նորին,  
 Թէ մի ըստ միոջէ՛ նստեալ զրէին:  
 Մեղապարտ է՝ անարժան փտեալ ի մարմնի  
 Տէր Ղազար դժողի էմ Ստամպոլցի,  
 Ծաղկարար անուանի աշկերտ Յայտինի  
 Այժմուս եմ բնակեալ Երուսաղէմի:  
 Մեղա՛յ ասա՛ լալով և արտասուելի,  
 Որ ոչ լիշէ զսղալանք, զոր կայ ի գրի.  
 Զի յաւել խօսեցար քան զկար քօլին,  
 Որ չէ արժանի այսմ խորհրդին:  
 Ով որ կարգայ զերքս զայս սքանչելի,  
 Եւ ով լսէ, սրտիւ մի՛ դանդաղեսցի,  
 Եւ ով ուսուցանէ այլոց զբան սորին,  
 Մարդացեալն Քրիստոս իւրն ողորմեսցի:  
 Ղազար Ստամպոլցի:

Եւ զմեր մն չցատի ըստմեզ զմի  
 Եւ զմայ Ե. ԱՒԵՏԻՍ: Կան ձոյ  
 Եւ միւսոցն մղն միտոյ զ յՄ  
 Յիսուս երթալը՝ Երուսաղէմ զեւեալիս.  
 Երկոտասան զաշակերտօք ա. յմԶ  
 Վաթսուն ու չորս վարդապետօք ա.  
 Ի հետ երթան, հետ քարոզեն ա.  
 Գնացեալ հասին լեզր ծովին ա.  
 Եւ աշակերտքն զարմացան ա.  
 Հանդիպեցան նաւավարին ա.  
 Յիսուս ասաց պատասխանին ա.  
 «Եղբայր, տարէք զմեզ ի կղզին ա.  
 Ասաց նաւավարն Յիսուսին ա.  
 «Գուք վարձ տուէք իմոյ նաւին ա.  
 Որ ձեզ տանիմ ես ի կղզին ա. զմն սխալմ  
 Ասաց Յիսուս Պետրոս վիմին ա.  
 «Գնա՛, բռնէ՛ ձուկ մի ծովին ա.»  
 Պետրոս բռնեաց ձուկ մի ծովին ա.  
 Զկան փորէն դէկան մի հան ա.  
 Հրամանօքն Քրիստոսի ա. յմ Երկոտաս  
 Եւ գնաւարն զարմացուցին ա.  
 Օրհնած է նաւն, օրհնած է ծովն ա.  
 Օրհնած որդին վաճառականին ա.  
 Զեզ յայտնութիւն մեզ թողութիւն ա.  
 Զեր ճնողացն արքայութիւն ա.  
 Արի, մամուկ, հաւու միս բեր ա.  
 Զուածեղէնն մի մուանար ա.

Մեր ընկերաց փարջ մի գինի ա.

Իմ ձայնակցաց խաչքաղանի ա.

Ել ի յոտին սէրն Յիսուսին տ.

111 Ձեր ննջեցեալքն հանգչին անդէն ա.

Ձեր գուստը, որդիքն վերուստ օրհնին ա.

112 Եւ ձեր տղայքն շատ ապրին ա.

113 Ձեր ծնողաց հոգւոյն ասենք ա.

Ամէն Հայր մեր որ ՚ի յերկինս ա.

Ծանօթ. հրատարակելով այս ոտանաւորները, որոնք թուով վեց են, մեր նպատակն է՝ հանդէս բերել Հայոց մէջ ընդհանրացած միջնադարեան գաղափարները Քրիստոսի մանկութեան վերայ. նոքա աւելի շատ արժարձուում են և այն ժողովածուների մէջ, որոնք Այսմաւուրք անունն են կրում: Այսպէս մեր սեփական մատենադարանի մի գրչեաց Այսմաւուրքի մէջ Քաղոց ամսի իթ. և չունվարի դ. թուահամարի տակ նշանակուած է Քրիստոսի ծնունդն ու յայտնութիւնը, սակայն պատմուած է իսկապէս երեք մոգերի գալուստը. այդ շատ ընդարձակ պատմութեան մէջ չիշուում են մի քանի մանրամասնութիւններ. զոր օր. ասուած է որ Մելքոնը Պարսից թագաւոր էր, Գասպարը՝ Հնդկաց, իսկ Բաղդասարը՝ Արաբացոց. նմանապէս ասուած է որ այն թագաւորների հետ եկել էին տասներկու հազար մարդ, որոնց առաջնորդում էին տասներկու հազարապետ. նոցա անուններն են՝ Բարխուրիդա, Գաղմուշա, Բարդիմշա, Զահաբանա, Խորինա Դրդմիշա, Դիշմուխա, Խամառա, Զաւուրշա, Աբշիրա, Զահուրա և Զամիրամ: Այդ տեղ է պատմուած, որ երեք մոգերն առանձին առանձին մտնելիս տեսնում էին Յիսուս Մանուկին զանազան կերպարանքներով, ինչպէս որ յիշուած է և ա-

ռաջին Աւետիսի մէջ: Հետաքրքիր է այն, որ Մելքոն թագաւորն ունեցել է իրեն մօտ «գիր կտակի, զոր ունէին ընդ իւրեանս պահեալ յառաջին նախահարցն. և տարեալ մատուցանէին, ասում է, առաջի Մանկանն և ասէին. Ահա նամակն, զոր կնքեալ ետուր ի պահեստ ի նախահարսն մեր. առ, բաց և ընթերցիր զգլխս ձեռաց քոց, զոր ետուր նախաստեղծին քոց: Եւ զիրն գրոյն գրեալ էր ի պահեստին՝ էր այս. Եթէ ի վեցերորդ դարուն յաւուրն վեցերորդի սկիզբն լինելու թեան քոյ՝ առաքեցից զմիածին որդին զբանն Աստուած, որ եկեալ մարմնանայ ի զաւակէ քումմէ և լինիցի որդին իմ որդի մարդոց և զքեզ յառաջին փառսն դարձեալ նորոգեսցէ վերստին, և ապա եղիցիս դու. Ազամ, իբրև զմի ի մէջ անմահ մարմնով ընդ Աստուած միաւորեալ: Այս է գիրն առաջին գրեալ մատամբն Աստուծոյ և կնքեալ, զոր Ազամ ետ ի Սէթ, և Սէթ յորդիան և որդւոց յորդիս մինչև ցնքրահամ: Եւ Աբրահամ ետ ի Մելքիսեղէկ քահանայն, և Մելքիսեղէկ ետ ի Կիւրոս թագաւորն Պարսից, և նա եղ ի սենեկի պահեալ զգուշութեամբ մինչև ի մոզսն. զոր բերեալ մոգուցն մատուցին առաջի Յիսուսի Քրիստոսի: Այս է պատճառ գրոյն, զի յետ ելանելոյն Ազամայ ի գրախտէն ետ նմա Աստուած որդի զՍէթ, որ թարգմանի միսիթարութիւն: Եւ ետ Աստուած զուխտն զերգումն իւր ընդ Ազամայ միջնորդութեամբ, գրոյն» (տես ձեռագիր Այսմաւուրք 1692 ամի): Մոգերի մասին խօսում է ԺԳ. գարում Վարդան պատմիչը. նա ասում է, «և Օգոստոս ևս մեծարեցաւ ի ճնանիլ մեծին Աստուծոյ և ամենակալ արքային. յորում աւուր եկին մոգքն երկոտասան հազար հեծելովք և լուեալ եթէ սով է ի Պաղեստին, թողին զգօրսն առ Աբգար և ինքեանք, որ մեծք էին, գնացին երկոտասան իշխանօք և հազար Հեծելօք. Մելքոն Պարսիկ, Գասպար Հնդիկ, Բաղդասար Արաբ, ոսկի, կնդրուկ, գմուռ ընդ ինքեանս

ունելով: «Զայն գրեաց Կուկիանոս ոմն Փասնկ, որ կաջր չկարիս, առ կաջրն Յզոստոս գիտասցէ ինքնակալութիւնն պո, զի եկին ի հարսուոյ արեւելից արք մեծաշուքք և երկրպագեցին տղայոց միոյ ճնեոյ ի Պաղեստին, հրաման առեալ ի վերուստ յաստեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա:» (տես Վարդանայ Պատմութիւն, տպ. Վենէտ. եր. 33.) Վարդան աշխարհագիրը Գասպարի գերեզմանը դնում է Մոկաց գաւառում: Նա ասում է. «Մոկաց գաւառն է՝ իշխանանիւստ, ուր կան բազում վանորայք: Նախ Ամենափրկիչն, ուր կայ դերեզման թաղաւորին Մոգուց Գասպարայ, և սուրբ Վարդանայ, և սուրբ Կանանց վանքն, որ այժմ սուրբ Գաչասի, ուստի էր Անանիա կաթողիկոսն Մոկացի:» (տես Աշխարհացոյց Վարդանայ, Կ. Պոլիս) Միւթար Արեւմտեցին իւր ժամանակագրութեան մէջ Գասպար անուան տեղը դնում է Դարասպար, իսկ Յիսուսի Եղիպտոսն դնալը յիշելով, ասում է՝ «հինգհարիւր բիւր կուռս կործանեալ, և զգալասանին պատճառն պատմութեան իւրոյ թողեալ:» (Մոկով, 1860. եր. 43, 44):

Մեր գրչեաց տաղարանից երևում է, որ հինգերորդ ոտանաւորը Ղազար Ստամբուլցու գրածն է, իսկ Գ. Ն. Մարրի նկատողութիւններից երևում է, որ այդ ոտանաւորը չօրինել է Յովասափ Սեբաստացին 1548 թուին: (տես Иѣтъ лѣтней поѣздкѣ въ Арменію, եր. 11, որի հայերէն բաղուածքները հրատարակեցին Հանդէս Ամսօրեաց 1892 թ. 8 և Բագձավէսլ 1892 յուլիս): Այս երկու իրար հակասող ցուցումները կարօտ են ստուգութեան ուրիշ ձեռագրերի միջոցով: Եթէ ընդունենք որ Յովասափն է չօրինել սույն ոտանաւորը, կը հետևի որ Ղազար միայն ընդօրինակող է: Ինչպէս որ ինքն իրեն անուանում է «գճող» «ճաղկարար»: Պ. Մարրը մէջ է բերել միայն մի փոքրիկ հատուած սույն ոտանաւորից:

Վերևը բերուած վեց ոտանաւորներից միայն մէկը

օրինակուած է 1623 թուի ձեռագրից, որ դանւում է Ս. Էջմիածնի մատենադարանում, իսկ միւսներն օրինակել ենք մեր սեփական մատենադարանի գրչեաց երգարանից, որ գրուած է 1695 թուին: Վեցերորդը ունի մի այլ խմբագրութիւն, որ առաջին անգամ հրատարակուեցաւ Գամառ-Քաթիպայի Արգաչին Երգարանի մէջ 1856 -ին Ս. Պետերբուրգում: Եւ արտատպուեցաւ նաև Միանսարեանի Քնար Հայկականի մէջ: Համեմատութեան համար բերում ենք այս տեղ և այդ երգը.

«Մեր Տէրն ծեր և ալևոր  
 Փառօք բաղմեալ Տէրն ի խաչին  
 Քաղցր ճաչնէր նաւավարաց:  
 Այ նաւավարք, դուք իմ եղբարք:  
 Եղբարք առէք զայն ծերս ի նաւն:  
 Ես ձեզ բազում աղօթս առնեմ:  
 Այ դնա՛ դնա՛, ծեր ալևոր:  
 Մեր նաւս չէ վասն աղօթից:  
 Նաւս մեծ է, վարձն շատ է:  
 Նաւս ի վարձ է վաճառականին:  
 Խաչ եհան, քարտէ կնքեաց:  
 Ձեռն տարաւ աւազն, էառ  
 Քարն, էառ դեկան: Ահա,  
 Ահա՛ ձեզ գրամ և դահեկան:  
 Վարձն երեա և նաւ մտաւ:  
 Զուրն անդնդոց պղտորեցաւ:  
 Նաւն ի յալուոյն կործումն էառ:  
 Ուստից եկար, մարդ մեղաւոր,  
 Ու դո՛ւ կորար, մեզ կորուսիր:

Եւ զուք անուշ ի քուն եղիք:  
 Աջու ձեռօք խաչահանէր,  
 Չախու ձեռօք նաւն վարէր:  
 Գեռ չէր եղել հասարակաց,  
 Կաւն ի ցամաքն հաստատեցաւ:  
 Եղբանք ելէք անուշ քնուդ,  
 Անուշ քնուդ դառն երազուդ,  
 Ի յօտն անկեալ ի Քրիստոսի:

Ահա մեզ Տէրն, ահա մեզ նաւն:

Աւետիսներ կան և արդի ժողովրդական բարբառներով. նոցա օրինակները կարելի է տեսնել հետեւեալ հրատարակութիւնների մէջ. «Քնար Մշեցոց և Վանեցոց, Ա. Վ. Սեդրակեանի, Վաղարշապատ 1874, երես 7» և «Վանայ Սաղ. Գ. Ղերկնցի, Թիֆլիս 1885, երես 79»:

**7. ՏԱՂ ՎԱՍՆ ԶՈՒՂԱՅԵՅԻ ՆԱԶԱՐԷԹԻՆ.**

Քանի ման գաս էդ քուչէնիդ.  
 Եկ սէյր արա մեր պաղչէնին.  
 Նօր է բացուեր վարդ զօնճէնին.  
 Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,  
 Խաներ ու սուլթան Նազարէթ,  
 Սանտուխտ սանտուխտ կապեցին.  
 Ի պատն ելան դուռն բացին.  
 Մէջ դեռերին թրատեցին.

Միլքմայի ու Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,  
 Խաներ ու սուլթան Նազարէթ:

Գետն կուգայ երես երես:

Խօճայ քո Աստուածն կուսիրես,

Այս գողերոյս թէնպէհ առնես.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ.

Դու ես նստել սազով տամով.

Գինի խմես ոսկի ճամով

Տէրտէրանի խաչէլամով.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Անպատումն օրդու ունիս.

Եկեղեցին քեզ սիւն ունիս.

Մէջ կուտանաց դու քոյր ունիս.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Աչքեր ունիս, հրեղին է.

Ունքեր ունիս, սիրտս կ'ալիէ.

Մէկ մ'ալ քեզ պէս մայրդ բերէ.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Քեօշկ ես շիներ, բարձր սարայ.

Հինգ տեղ ունիս թրի ետարայ.

Եղբալը չունիս, կանչէ հարայ.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Եւ յարար մահ Սանտուխտ սանտուխտ կապեցին.

Եւ յարար Աէս գիշերուն ճայն հանեցին.

Խօրօղխօտուն թրատեցին.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Իշտէ դորս որտիղ խօցն,

Զոր հարցանեմք ձեր Պօղոսն,

Աճէպ կուգայ զատկին փոսն:

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Վարդացեր ես եչն ու եւրն.

Հայի՛ք չէ գուն հագնիս սեւն.

Քո հագուստըն ալ զար պիտի.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Տեսօք անչափ ես գեղեցիկ.

Չատ թուրքերուն եղեր խոցիկ.

Պէնկեր ունիս տասն ու վեցիկ.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Քան Սողոմոն ես իմաստուն.

Եւ քան զՅովսէփ ես դերագոյն.

Երես ունիս քան վարդի գոյն.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ,

Աղբոր ես դու քան զամենայն.

Խօճայ, չի գտուիր քեզի նման.

Մեզ խոցեցիր համանգամայն.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ,

Խաներ ու սուլթան Նազարէթ:

Իսպահանու վարդն դու ես.

Չահ Ապասին ցանկալի ես.

Աճէն ազգաց գովելի ես.

Վայ մին Նազարէթ, ճան Նազարէթ.

Խաներ ու սուլթան Նազարէթ:

ԾԱՆՈԹ. Այս երգի մէջ գոված Նազարէթը թերևս այն Խօջայ Նազարն է, որ նշանաւոր էր Չահ Աբաս Ա. թագաւորի ժամանակ. նորա մասին խօսում է Առաքել Դաւրիժեցին իւր պատմութեան մէջ Գլ. ԺԷ. եր. 151.

Տ. ՏԱՂ ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻՍՄՆԵՑ ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ԳԼԽԱՏՄՈՆՆ (\*)

Ի. Ինն հարիւր Հայոց թուական

Յիսուս և Եօթն թիւ աւելեան

Յիջմիածնէն նուիրակք եկան

Բոլոր աշխարհս Հռոմոց տան

Յ. Յոլով մեռոն կայ ընդ ինքեան

Մեծ նամակով և օրհնութեամբ.

Եկեալ հասին Բիւզանդիեան

Որ է Ստամպոլ սրբոց կայան:

Ո. Ով որ տեսաւ զնոսա լման,

Իբր զհրեշտակ ընդունեցան.

\*) Յիսուս որդու գոյն ասա:

- Եթէն Յովհաննէս սրբոց նման  
Եպիսկոպոս ազնուական:
- Վ. Վանք է՝ անապատ ուրախացան,  
Յորժամ տեսին ըզերեսեան.  
Զտէր Սարգիս եպիսկոպոսն  
Եւ գրաւիթ կոյս արեղայն:
- Ա. Անուանք նոցա համբաւեցան,  
Սուրբ օրհնութիւնքն որ կարգացուան.  
Եկեղեցիք բերկրեալ ցնծան  
Եւ ժողովուրդս, որ օրհնեցան:
- Ն. Նրբերկեցին դքաղաքս լման,  
Եւ նաւեցին քաղաք Կաֆայն.  
Կաֆայեցիք խիստ ցնծացան  
Իբր զառաքեալոն տէրունական:
- Ե. Ելեալ գնացին Լաբա Պօղոտան.  
Սէչով քաղաք քրիստոնեայք կան.  
Ամէնն տեսին, ուրախացան  
Մինչի պարոն և ոյթերն այն:
- Ս. Սէչովացիք զնոսա տեսան.  
Խիստ պատուեցին և օրհնեցան.  
Իլով քաղաքն յուղարկեցին,  
Զատ քրիստոնեայք, որ ի հոն կան:
- Ի. Իլովացիքն երբոր տեսան,  
Հանց պատուեցին սրբոց նման,  
Զինչ սուրբ Կրիզոր պետ Պարթևեան,  
Լուսաւորչին թողանց նման:
- Յ. Յնծան նոքա ի ժողովն այն.

- Զուրջառք և զգեստք խիստ պատուական  
Իլով քաղքէն առին, ելան,  
Դարձեալ եկին ՚ի Աղբիւրման:
- Ե. Երբոր հասան ՚ի Աղբիւրման,  
Խիստ խնդութեամբ բերկրեալ ցնծան.  
Անտի նաւեալ, եկան հասան,  
Որ է Պօլիս Կոստանդիեան:
- Հ. Հիւրեր եկին մեզ աննման  
Զինչ զհրեշտակք Աբրահամեան.  
Ոնց Ստամբուլցիք զնոսա տեսան,  
Տեառն Աստուծոյ շատ զոհացան:
- Ա. Անդ ժողովուրդք ժողովեցան վշաջ  
Եւ առացին ամենեքեան,  
Թէ մի երթայք դուք միաբան,  
Կաթուղիկոսն եղեալ վաղձան:
- Յ. Յայնժամ նստեալ և խորհեցան,  
Զրաւիթ զրկեն ՚ի տեսութեան.  
Ոնց որ հասաւ Ամասիեան,  
Լուկ մատնեցին զինքն ՚ի յատեան:
- Ա. Անդ անօրէնք ժողովեցան  
Որդիքն նեռ և կորստեան.  
Պիղծ Յուդայի եղեն նման,  
Որ մատնեցին զտէրն ՚ի յատեան:
- Յ. Յասմամբ եկեալ զրաւիթ տարան  
Պարոնորդոյն դուռն ի տիվան.  
Ասին չաշուտ են միաբան,  
Սօֆին զրկել ՚ի Փրանկիստան:

- Ե. Եղին ի բանտ և ի զնտան,  
Զինքն մատնեցին ՚ի ըսկէնճան,  
Զխեղճ մարմինն ի տաքացան,  
Ի չարչարանքն մաշեցան:
- Ա. Անտի տուեալ ՚ի գորական,  
Վիզն ի գէնճիլ ձեռն կիլապչան,  
ԶԳաւիթ բերին ի մեծ տիվան,  
Տարին ձգեցին զափուճոցն օտան:
- Լ. Լուք զափուճիքն ամենեքեան  
Ի ձի հեծեալ վանքն հասան,  
Երբ նուիրակքն զնոռա տեսան,  
Զահի հարեալ զերդ զուռ զողան:
- Ե. Եկեալ տարան զնոռա լման  
Ի մեծ վէզիրն Ալի փաշան,  
Յայնժամ տեսեալ ըզերրորդեան,  
Ասէ բերէք վաղն ի տիվան:
- Բ. Բերին զինքեանք վաղն ի տիվան,  
Հաւսար նստան երեք փաշան,  
Հարցաքննեն զամենեսեան,  
Սուչ մի գանուռն նոցա վերան:
- Ա. Անտի ելեալ խոնտքսր մտան,  
Նա էր ասցեալ զիժար հրաման,  
Ոսաց՝ ձգեցէք զափուճոցն օտան,  
Մէկ քանի օր տան ըսկէնճան:
- Ն. Նոքա ելեալ ամենեքեան,  
Ի Հուտկարէն առեալ հրաման,  
Լուք կացուցին այլ վի տիվան,

- Հմբռնեցին առեալ տարան:
- Ս. Սուրբ Յովաննու պէս բանտ տարան,  
Զինչ Քրիստոսի օրն ըմբռման,  
Ի չարչարանքն զանազան  
Աւել աւուրս հնկէտասան:
- Ա. Աւրն էր շաբաթ սուրբ կատարման  
Նահատակացն ՚ի երրորդեան,  
Գլխատեցին զամենեսեան  
Լոյս կիրակի օր յարութեան:
- Յ. Յովաննու պէս գլխատեցան,  
Կամ Յակոբու առաքելեան,  
Որ է մարմինն ի Սպանիան,  
Զաւուրս երրորդ անթաղ մնան:
- Ս. Սրբոց մարմինքն որ հոն կեցան,  
Ոչ լերեսներն թարշամեցան,  
Լոյսն էր իջեալ աստղանման,  
Զայն լոյս տեսեալ շատ Մրսրլման:
- Յ. Յետոյ գնացեալ Էմին խօճան  
Մօտ մեծ վէզիրն Ալի փաշան  
Իբր զՅովսէփ Արեմաթեան  
Խնդրել զմարմինն տէրունական:
- Ն. Նա էր տուեալ աղէկ հրաման,  
Գնա՛ թաղէ՛ զամենեսեան,  
Զամէն յատէթն արէ՛ք լման,  
Զինչ ձեր օրէնքն տայ հրաման:
- Ի. Իսկ վարդապետք ժողովեցան,  
Եպիսկոպոսք հաւաքեցան,

- Եւ կրօնաւորք շատ միաբան
- Սրբոց թաղումն զուժարեցան.
- Ե. Երիցանիք խիստ զանազան
- Մեծ ու կրտսեր յաշխարհական
- Ի հոն հասին ամենեքեան,
- Եւ սուրբ թաղմանն արժանացան,
- Բ. Բամիւ կանգնեն կարդ կատարման
- Եւ կատարեն զամէնն լման,
- Պատեն զմարմինքն միաբան
- Եւ սահմանեն ի մի տապան:
- Կ. Կանայք բազում ժողովեցան
- Լալականներ ողբերգական,
- Ղատ լացուցին զամենեոեան,
- Մինչ սար ու ձոր ի լաց ելան:
- Ե. Երեք մանկանց սրբոց նման
- Երեքն մի տապան եղան,
- Արժանացան սուրբ հանգստեան,
- Գուք այլ կացէք ուրախութեամբ:
- Բ. Բամիւ զամէնքդ միաբան
- Զձեզ աղաչեմ զամենեսեան,
- Ես Յովհաննէս անարժան
- Եմ քահանայ գործովս ունայն:
- Ն. Նըւիրկերուն օր կատարման
- Սակաւ բաներս որ զրեցան.
- Ով ոք ասէ զչալը մեզան:
- Յիշեալ լիցի արքայութեան:

Այս գործեցաւ ՚ի մեծ թուական  
 Ինն հարիւր թիւն էր լման  
 Յիսուն և եօթն թիւ յանլեան  
 Հոկտեմբերի եօթն և տասեան:  
 Զձեզ աղաչեմ զամենեսեան  
 Ով ընթերցողք տեսրք սրբազան,  
 Թագսիրութիւն չանէք, արարիչն Աստուած  
 օրհնէ զձեզ,  
 Անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:

Յովհաննէս քահանայ:

Ծանօթ. Ս. Էջմիածնի նուիրակների գլխատումն ե-  
 դաւ Հայոց ջձէ. և փրկչական 1508 թուին հոկտեմբերի  
 17-ին: Մեր սեփական գրչեայ տօնացոյցի մէջ Ս. Խաչի  
 Ե. շաբաթ օրն այսպէս է նշանակուած. «Պաբաթ՝ Աւե-  
 տարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, և Ղուկի-  
 անոսի քահանային Անտիոքայ և սրբոց վկայիցն՝ Տարագ-  
 գրոսի, Պրոպոսի և Անդրոնիկոսի և այլոց աշակերտացն  
 Պօղոսի, և Պեղեղեայ կուսին, և նորն ահատակացն  
 Յովհաննէս փարգապետին և Սարգսի եպիսկոպոսին և  
 Դաւթայ կրօնաւորի, որ նուիրակ առաքեցան Էջմիածնէն  
 և նահատակեցան ի կոստանդինուպօլիս գլխատմամբ սրոյ  
 ի թուականիս Հայոց ջձէ:»

9. ՅԱՂԱԴՍ ՔԱՂԱՔԻՆ ԱՄԱՍԻՈՒ.

Ո՛վ դու վայելուչ քաղաք

Լեռնամէջ կառնոցք գերակայ.

ձինուածք հրաշալի ունիս,

Որ անունդ է Ամասիա:

Գղեակդ անառիկ ամրոց

Քարանձաւ լերանց վերայ կայ.

Քարհատ պահարանք զանձուց

Յօրինեալ ի Միհրդատայ:

Խոր ձորամէջ վայրիդ

Մշտահոս գետոյն մերձակայ

Սիրով հաճեցան բնակիլ

Քաջատոհմ որդիք հայկազնեայ:

Գետդ այդ հեռագոյն վայրէ

Բարձրաբերձ լերանց հոսի,

Ծիծաղածաւայ զնացիւք

Մտանէ ի ծովն Պոնտեայ

Սովաւ զարգարին բոյսք քո,

Նմանեալ զբախտին Եդեմայ.

Ծաղկին ծառատունկ այդիքդ

Գեղազարդ ի մուտն ապրիլայ:

Փթթին զոյնգոյն ծաղիւնքդ.

Հոտ անուշ բուրին յարակայ,

Վարդն պատուական զովեալ

Եւ շուշան ընդ բրաբրոնեայ:

Երգէ քաղցրաձայն պիւպիւն

Ջերչս անուշ և զուարճանայ,

Ջմալի վարդին սիրուն,

Կայ նստի ի թփին վերայ:

Պտուղ բաղմացեղ ունիս:

Ջանաղան ճաշակ քաղցրանայ.

Նուռն և սերկիւն խնձոր

Հիւանդաց շարապ լինենայ:

Որթն զբախտարոյս է տունկ.

Ջոր բերէ զխաղողն ողիւզեայ,

Ազնիւ զովական պտուղ

Ճաշակածն ասեն Աբամայ:

Ճմլի ՚ւ ի կարաս լցուի.

Նա բաժակ սիրոյ լինենայ.

Թէ ի սուրբ սեղանն ելնէ,

Փրկչական արիւն զոյանայ:

Ջսուրբ Աստուածածնի տաճարն

Ընդ տրբոյ մեծին Յալոբայ

Եւ զՆիկիոյոյսն ընտրեալ

Հայրապետն յերկրին Ասիա:

Ընդ այլ բաղմահոյլ սրբոց

Եւ զՅասիլ վիայն քահանայ

Առ քեղ բարեխօս ունիս

Եւ քոյոցդ, ո՛վ Ամասիա:

Թէ ինձ հրաման լինէր,  
 Կապէի կամուրջ քո վերայ,  
 Եւ նշդարենի ծառոց  
 Տերևով ծածկուի՞ս սազարթեայ,  
 Որ ոչ վնասէր զքեզ  
 Զօրաւոր շողն թամուզայ  
 Յաջմէ յահէկէ շմաթք,  
 Որ հեղինկ հողմն գայր ի նա.  
 Յնցուղ փայտեղէն բերեալ  
 Կազմէի իբր զջրմղայ,  
 ԶՊուտուխու գեղի գինին  
 Հեղուի գալ ի քո վերայ.  
 Ներքին շատրուվան ծովակ  
 Ղինէի սալից մարմարեայ  
 Վեցից անկիւնից կազմեալ,  
 Որ է ձև ազնիւ շէշխանա,  
 Յորդառատ աղբերց նման  
 Խիտ առ խիտ բղխմամբ ցոլանայ,  
 Նման ծովակին ազնիւ,  
 Որ շինաւ ի Սագոմոնայ:  
 Բաժակ ոսկեղէն լինէր,  
 Որ տանէր մինն վեց օխա  
 Մեք անդ ի գահոյս բազմեալ,  
 Լինէաք իրախ մէստանաս.  
 Մատրուվակն յոտին կացեալ,  
 Մեզ բաշխէր զգինին անխնայ.  
 Մէկ մէկ այն ոսկի ճամով

Ես խմեմ, որ կարգն ի քեզ դայ՝  
 Ապա դուարճացեալ բերկրիմք,  
 Քաղցր երգեր մեզ պիտոյանայ.  
 Խօսիմք այլ և այլ լեզուս,  
 Զինչ զինին մեզ բարբառել տայ:  
 Այսքան բաւական լիցի,  
 Մարտիրոս, զբանդ զրաւեան,  
 Ծաղրալի անպէտ խօսիցդ  
 Ով հաճի թէ նոր երգէ սա:  
 Իննուն շատ մի հետևիր  
 Թէ պատճառ սիրույ է մեզ նա,  
 Զբազումս անառակ առնէ,  
 Սողոմոն արքան է վկայ:  
 Զհամարն որքանի թուոյս  
 Քանակաւ ազգիս հայկազնեայ  
 Ահա բացայայտ գրեմ,  
 Մի ասեր դու, եթէ չէ նա:  
 Մարտիրոս Ղրիմեցի:

10. ՎԱՍՆ ԹՈՉՆՈՅ:

Տէր Յովհաննէս Հոգւով տկար  
Եպիսկոպոս յերկիր օտար.  
Կամիմ գովել զհաւքերն՝ հաւնար  
Ուրախութեան մարդկան համար.

Արտօտիկն ճռնչայր  
Առաւօտուն, երբ լուսանայր,  
Անդադար փառաբանէր  
Ջաստուածութիւնն, յերկիւնս որ կայր:

Սարեկիկն սարսափէր  
Ձինչ զՋերմոտ կամ զգիւհաւար,  
Որպէս գուսան չարփարագան  
Ինքն զարկէր, ինքն խաղայր:

Միժեռնակն՝ գայր, շինէր  
Ձիւր հայրենի տուն և տաճար,  
Եւ ի վերայ այն տաճարին  
Սաղմոս երգէր զօրն անդադար:

Մանրիկ հաւն աւետաբեր  
Ինքն կ'ածէր, ինքն ցնծայր,  
Երթայր, նստէր վերայ վիմին,  
Գուշակ լինէր գարնան համար:  
Գուգուն զամէն գարուն կուգայ.  
Ի յիւր գլուխն փետուր մի կայ,

Ձինչ Հերովդէս կամ զՊիղատոս  
Կամ զանհաւատսն հաւանար:  
Թուժակ պարնոց տունն՝ կենայր,  
Չթողոյր, խաթունն որ բողանայր.  
Ձինչ որ տեսնոյր կութոնթորայր,  
Պարոնն որ դայր, նա տայր խապար:  
Եղնարօտիկ հաւն էր տրուար,  
Հետ արօրին՝ երթայր ու վայր,  
Որդունք քաղէր զամէնն հուսար,  
Մէկ մի չթողոյր ճազունն համար:

Լծէլծէն ի շուրջ կուգայր,  
Ձինակներուն խրատ կուտայր.  
Լծէ լծէ կ'ասեր ճարտար,  
Ձինչ զհօտաղ կամ զհօրէվար:

Անձեղիկն ի վեր վաղեաց,  
Հպարտացաւ յիւր միտքն ի վայր,  
Թէ իմ փետուրս սև ու սպիտակ,  
Աղիս քան զայլ հաւուցն յերկար:

Քրէէրբիկն ճրտվրտայր,  
Ջամէն ցորեկ իւր ճայնն գայր,  
Ինքն ապրի տարին հաղար,  
Ով զինքն ուտէ, խիստ շնանայ:

Չահին-բազէն էր շահարար,  
Ջօրն ամիրտոց թեւն կենայր,  
Նա կութուչի սարէ ի սար,  
Որսունք առէ տիրոջ համար:

Մեղուաքաղի մեղքն էր դրժար,  
 Չթողոյր մեղուն որ շատանայր.  
 Տարին բոլոր կուաշխատի  
 Վասն մեղրի մեզի համար:

Հաւալասան հաւն էր արդար,  
 Ինքն Դաւթի սաղմոսն կայր,  
 Զօրն յանսպատն բնակէր,  
 Օրինակէր Քրիստոս արդար:

Աղանի ոսկի փետուր  
 Քան զամենայն հաւքերն արդար  
 Նոքա կապեն երամք հաղար,  
 Ի շէնն ի շար երթան հաւօար:

Խօսողն ի թառն իջնոյր,<sup>5</sup> կենար,  
 Հետ հաւերին ի շարվէշար,  
 Երբ հրեշտակաց ձայնն լսէր,  
 Ծափուց կուտայր, կուկուկուզայր<sup>6</sup>:

Ուրուրն ավան էր զինչ զԹաթար.  
 Ոչ ոք զմուէր ՚ի շէնն երթայր,  
 Առնոյր զհաւի ձագն գնայր,  
 Թէ հաղար մարդ լետեն գողայր:

Սազն յարօտ երթայր ու գայր  
 Զինչ անասուն կամ զօջիւար,  
 Խարտոց ունէր զինչ դանկարար,  
 Գողն որ գայր, նա տայր խապար:

Կուակրօիկն կուցնծայր,  
 Հագեր կապուտ, կուպարճենայր,  
 Թէ գայր հաւքերդ որ գօվեցիր,  
 Մէկ մ' իմ փետուրս խակի չկայ:

Այ օրինակ. <sup>1</sup>. զհաւերքն, <sup>2</sup>. ճիճեռնիկ. <sup>3</sup>. տանն.  
<sup>4</sup>. հարօրին. <sup>5</sup>. ելնոյր. <sup>6</sup>. կուկուկուզայր:

11. Ի վԵՐԱՅ ԱՂՈՒՔՍԻՆ.

Աղուէան կուզայր ի լեռնէն ի վայր.  
 Եւ գայր, իջնոյր երդէքն ի վայր.  
 Ինձ մեծ մեծ հաւ պիտի ու գէր.  
 Սիրուն Աղուէս, ազին ծաղիկ:

Աղուէսն նստէր քարին անխօս,  
 Ուսայ եղալ մարմնովս պիրոս,  
 Ինձ կուպիտի, կուպիտի կարմիր խօրօս.

Սիրուն աղուէս, ազին ծաղիկ:  
 Աղուէսն հագեր լուրջ ու գեղին.  
 Ի շուրջ կուգայ բոլոր գեղին,  
 Աչք է գրեր մամկայ եղին,  
 Սիրուն աղուէս, ազին ծաղիկ:  
 Աղուէսն նստեր վերայ գիգին,  
 Զազին կուեր վերայ վզին.

Աչք է դրեր ժամկայ ընկրդին.

Սիրուն աղուէս, ազին ծաղիկ:

Աղուէսն հաղեր քուրքով մուշտակ,

Ուսայ եղայ մարմնով հրեշտակ.

Ինձ կուպիտի ժամու շուշտակ.

Սիրուն աղուէս, ազին ծաղիկ:

Աղուէսն ասաց վարդապետին,

Զքեզ տի հանեմ վերայ փայտին,

Անցուցանեմ այնդին գետին.

Սիրուն աղուէս, ազին ծաղիկ:

Ո՛վ աղուեսունկ, փոքրիկ գագան.

Ոտերդ կարճ ու խիտտ վագան.

Ղներն ամէն քեզ չի հասան.

Սիրուն աղուէս, ազին ծաղիկ:

12. ՏԱՂ ՍԻՐՈՅ.

Նազու տիլբար, գալըմ քաֆէր, թուխ աչեր.

Յէր չես իգար, օրիկ մի զիս հարցաներ.

Չատ եմ քաշ դարդ ու զախիր քեզ համար,

Սպիտակ ճակատ, բարակ ուներդ է կամար:

Աչերդ ծով, ես խեղճ եղայ նաւավար,

Կարկ եմ եղեր, ծով տեսնուլ չեմ կարենալ:

Գիշեր ցերեկ քունս է հատեր աչուերոյս.

Ա՛յ անողորմ, ականջ արան քո գերոյս.

Խէքիմ կ'ասեն. դու դեղ արան խոցերոյս.

Այլ չեմ կարեր ընդգիւմանալ կրակոյս:

Գիշեր ցերեկ քո սէրն արեր զիս վարամ.

Ա՛յ անօրէն, դէմ քար չեմ, որ դիմանամ.

Քունս չի գար, երթամ, պառկեմ, քնանամ.

Երթամ, պահ մի լալով ժուռ գայ, այլ է ի դամ:

Գիշեր ցերեկ քո դարդէն կուհառաչեմ.

Կ'ուզեմ զանունդ բանան ( ) անեմ, կ'ամաչեմ.

Այլ չեմ կարեր գաղտու ապրել, կուկանչեմ.

Իսպիտակ ճակատ, բարակ ուներդ է կամար:

Գոհ եմ քեզնէ, Յիսուս անմահ միածլին.

Նասիբ արիւր զաղէկն ընձի դրացինն ( ).

Չատ խե տեսայ, որ աղէկնին պահ կ'ածեն.

Յետոյ գամէնն անտէր թողին գնացին:

Խե Ստեփաննոս, դու զքեզ խելօք կուկարծես,

Զբարին թողիր, կամաւ զչարն կուգործես.

ԶԱստուած թողիր, զանգէտ կինն կ'աղաչես.

Զահեղ դատաստանին օրն կ'ամաչես:

Ստեփաննոս:

13. ԱՌԱՆՈՏՈՒՆ ՔՍՄԵԿՆ

Առաւօտուն քամեկն ելեր, մաղէ զիս:

Քո սէրդ ելեր, կրակ եղեր, տաղէ զիս:

Պուլպուլն ի վարդն հուր է ձգեր, զու հասիր:

Մի թափիր, վարդ, մի թափիր,

Նազըւմ, մի թափիր\*):

Առաւօտուն ամպեկն իջեր թացըւած,

Քրիստոսի ողորմութեանն լուացուած,

Հայի՛Ք ափսոս, խորեաթի ձեռքն բացուած:

Մի թափիր, վարդ, մի թափիր...

Նազըւմ, մի թափիր:

Ղարիպուլթիւնն եկաւ, իմ սիրտն առաւ, հայ:

Ահա զիմ վարդն պաղչէն առին տաբան, հայ:

Այնոր համար սուք եմ մտեր, կուլամ, հայ:

Մի թափիր, վարդ, մի թափիր,

Նազըւմ, մի թափիր:

Ահա ելաւ արքայութեան հովերն:

Սէրդ ալ մնալ ի յանատակ ծովերն:

Ջարկեր չատըր պիւլպիւլ վարդին քովերն,

Մի թափիր, վարդ, մի թափիր,

Նազըւմ, մի թափիր:

\*) Ղարունակութիւնն է թուրքերէն «տօքուլմէ վիւլ, տօքուլմէ, մէլէիմ, թօքուլմէ»:

Օքսիզ տէրտէրն գայս բանս ասաց իւրեան, հայ:

Ահա եկին զիմ յեարս առին, տարան, հայ:

Այնոր համար սուք եմ աւեր, կուլամ, հայ:

Մի թափիր վարդ, մի թափիր,

Նազըւմ, մի թափիր:

Օքսիզ Տէրտէր:

Ծ ա ն օ թ . Հայերգի մէջ Հ. Արիստակէս վ. Տէվկանց, թուելով հին երգիչների անունները, նոցա կարդում չիշում է, «Օքսուզ Թորոս Վանցի» թէ «Օքսիզ Տէրտէրն» և «Օքսուզ Թորոսը» միևնույն անձն է թէ տարբեր են, չենք կարող որոշել. տես Հայերգ ժա. սակայն պէտք է կարծել, որ տարբեր մարդիկ չեն, որովհետև Հայերգի 63 երեսում չիշեալ երգից մի հատուած կա, որի յօրինողն Օքսուզ Թորոսն է. այդ հատուածն ամբողջապէս դնում ենք այստեղ համեմատութեան համար.

«Քեզ համար սուք եմ մտեր,

կուլամ, հայ, մի թափիր, վարդ, մի:

Օքսուզ Թորոս գայս բանս ասաց

Իւխանն (Իւրեանն) հայ, զիմ սիրական

Եարս առին տարին հայ:

Այնոր համար սուք եմ մտեր կուլամ հայ:

Մի թափիր վարդ, մի թափիր վարդ, մի թափիր:

Ահա այրեցայ սիրոյդ տարտէն, մի թափիր:

Ահա ելաւ արքայութեան հովերն:

Սէրն ալ նման է յանատակ ծովերն:

Պուլպուլն չադրր գարկեր վարդին քովերն,

Մի թափիր, վարդ, մի թափիր:

Այրեցայ սիրոյդ դարտէն, մի թափիր, վարդ:

յան, մածոյի բառս սմայ ոչար մղձաղ յա բոսց՝

յան, մաղառ 14. ՊԱՍՆ ՀԻՐԻՍԻ.

յան, նայտի, դմա նմ ց.ուս դանա՛ զոմյ՝

Բարեկենդան է. մի մեղադրէք.

Զոր ինչ ասեմ, մի տնադէք.

Զհէրիսին թէպտիրն արէք,

Եւ կանխկիկ ուտեցուցէք:

Ա՛յ հէրիսայ իմ սիրելի՛

Ամենեցուն դու ցանկալի,

Յերուսաղէմ ու ամէն տեղի

Առանց քեզի մատաղ չիլնի:

Ա՛յ հէրիսայ իմ գովական,

Ոչ ոք չկայ քեզ նման

Ամէն մարդիկ առջևդ դողան:

Եւս առաւել ես անարժան:

Ա՛յ հէրիսայ դու թագաւոր,

Կէշկէկն է քեզ ոպասաւոր.

Խորվաւն է քեզ մեծ գորաւոր.

Փիլաւն քեզ նմանաւոր:

Ա՛յ հէրիսայ ապուր օրհնած,

Ապուրներուն մէջ ես գոված.

Մեռեալք զքեզ ասպարած,

Ի քեւ փրկին ամէն մեղաց:

Ով զիւր մեռելն կուսիրէ,

Պատարագաւ զնա չիշէ,

Իշերն ի բուն զքեզ եփէ,

Եւ վաղվնէն առատ բաշխէ

Ամէն մարդոյ հեշտ ուտելի

Եւս առաւել ծերոց ասի.

Առանց ծամել ի կուլ տանի,

Եւ իւր հոգին փառաւորի:

Ա՛յ հէրիսայ, իմ գովելի,

Բազում բարեաց ես արժանի.

Չէքերն և մեղրն ի դէմ քեզի

Բնաւ ի քեզ չեն նմանի:

Ա՛յ հէրիսայ, ապուր օրհնած,

Ամենեցուն ես դու պատուած.

Թէ կենդանեաց և թէ մեռաց

Ինդու թափ ես փորու քաղցած

Ա՛յ հէրիսայ, իմ գովելի,

Արժան լինիս դու իմ բերնի.

Կակուղ լօշով ի կուլ տալի,

Կարմիր գինով զքեզ թաղէի:

Ով Թոխաթցի Մինաս դպիր.

Ի հէրիսին փէշն կպիր.

Թուլցուր զգօտիդ և կշտացիր.

Փափաղանացդ քո հասիր:

Ես ծեր ալեօքս մեղաւոր, Ո  
 Զքեզ կուտիրեմ սրտովս բոլոր.  
 Զինչ կերակուր կայ խիստ աղւոր,  
 Ամենեցուն գու թագաւոր:

Միթէ ինչպէս անդէտ չմարդ է,  
 Որ գքօ հարկիքն չգիտէ,  
 Կամ դքեզ սիրով չմեծարէ  
 Կամ առանց քե մատաղ յառնէ:

Քահանայից դասք երամով  
 Վարժամ ընթրիս լսեն քենով,  
 Իրմ Զքուն ընծեն, յոյժ խնդալով,  
 Թէ հէրիսայ ուտենք յոյով:

Յ. Յորժամ որ առաւօտ լինայ,  
 Յ. Յեկեղեցին փութան նոքա.  
 Եւ Սլ ոչ աղօթք մտվին կուգայ,  
 Եւ թէ հէրիսան երբ պիտի գայ:

Յերբորդ հէրիսան բերին,  
 Սպասաւորք յառաջ եկին,  
 Ըզիւղ անուշն զորդեցին,  
 Եւ բուրվառով խնկարկեցին:

Քահանայից դասք ցնծացին.  
 Սարկաւագաց ջուկքն բերկրին.  
 Զժողովուրդքն խնդացին,  
 Եւ զպատառն զորդեցին:

Յերբ հէրիսան ընդմեջուցին,  
 Յառջև քահանայից եղին,  
 Տիկ միտղիմի աղ հետ բերին,  
 Եւ մատրուռնալին ի հետ նորին:

Մաղուն Սյ հէրիսայ, զիս յետդրարիւր,  
 Մայնառ Որ ի Լեհաց երկիրն ճգեցիր.  
 Տարին անգամ չես հանդիպիր,  
 Մա Որ դքեզ ինձի ի կերտայիր:

Մա Սմ խիստ անուշես, հէրիսայ,  
 Մա Երբ արդար եղի շատ լինայ,  
 Կակուղ հացիկ ընկերանայ.  
 Ով որ ուտէ, ուրախանայ:

Յա Սյ ինչ զովանք տայք հէրիսի.  
 Երնէկ պնոր, որ հասողիպի.  
 Կամ սեսե զունմէն պիտէի,  
 Եւ մոտիւրտիս մէջ տեղն տայի:

Մա Զինչ աղղ որ կան ի յաշխարհի,  
 Մա Եւ Քեզ զովանք տան ի հետ ինձի,  
 Եւ փափաղին ի դէմ քեզի,  
 Մա Որպէս մեղու ի դէմ ծաղկի:

Վարդապետաց դասք պոննայն,  
 Մայն կրօնաւորքն միարան,  
 Յորժամ լսեն զհէրիսան,  
 Ամենքեան զվանքն ուրանան:

Երեցականքն ամենայն  
 Զերեցկեոջն թարկն տան,  
 Զամէն ուսումն մոռանան,  
 Վազեն 'լ երթան ի հէրիսան:

Աղքատք և կոյրք, որ կու մուրան,  
 Ծերք և տղայք, կին պատուական,  
 Ամենեքեան համանգամայն  
 Վազեն 'լ երթան ի հէրիսան:

Մահմետականքն ամենեքեան  
 Թողուն զփիլան և զգէրտան,  
 Զփախլաւան և զըրվան,  
 Եւ գան ուտեն զհէրիսան:

Կերակրոց մէջ ես դու գոված.  
 Լուսաւորիչ զքեզ օրինեաց,  
 Սրար զքեզ և հաստատեաց,  
 Եւ կերակուր մեզ պատրաստեաց:

Ազնիւ ծաղկանց դու նման ես,  
 Համասփիւռ և վարդի թերթ ես.  
 Ուրտեղ որ է, եփեն զքեզ,  
 Անմահութեան հոտդ բուրես:

Որպէս ոսկի անապական  
 Եւ անգին ակն ես պատուական,  
 Մեռած հոգիքն քեզ ցնծան,  
 Եւ կենդանիքն ուրախանան:

Հարք և եղբարք իմ պատուական,  
 Մարեր, քուրեր ամենեքեան,  
 Խնդրեմ ի ձէնջ լալողական,  
 Որ չի մոռնայք զհէրիսան:

Երբոր եփէք զհէրիսան,  
 Ինձ դարիպիս կեր տաք արժան,  
 Ի յԱստուծոյ դարձցի փոխան  
 Արքայութիւն անանցական:

Մեռեալքն ամէն ի հող տապան,  
 Յորժամ լսեն զհէրիսան,  
 Յնճան հոգւով և զուարճանան,  
 Եւ Արարչին զփառս տան:

Ի թվականիս հագար ամի  
 Եւ տասն 'լ երկու թիւ աւելի  
 Եւ ի յամսեանն փետրվարի  
 Օրն էր ուրբաթ ե. համարի:

Քայց ես դարիպս թոխաթցի  
 Մինաս անուն մեղաց գերի  
 Եկի անկալ Լօվ քաղաքի,  
 Կարօտ մնացի ես հէրիսի:

Ծեր ալեօք եմ սպիտակ,  
 Ակուայ չկայ բերանս դատարկ.  
 Որ հէրիսայ լինի տաք տաք,  
 Կակուղ պիտանայ մեզր ու կարաք:

մանկաւ Երգս գրած է Մինասի դա՛  
 Անմիտ, լիմար, և փանաքի.  
 Ձեզ արմաղան ընծայեցի,  
 Զիս լիշէք սիրով սրտի:

Եւ որ ասէ մեզ ողորմի,  
 Քիւրապատիկ իւրեան տացի,  
 Երժան լինի Հէրիտայի,  
 Եւ մատուցման պատարագի:

Հայր մեր յերկինս ոյ որ ասէ,  
 Ուղիղ սրտով զիս լիշէ,  
 Զեկայք օրհնեալ ձայնն լսէ,  
 Յաջակողմեան դասն անցանէ:

Մեա դարա՛ յովմանայից զ  
 զյնաւ արժ արդի: Եւ մտա՛ Մինաս Թոխաթցի:  
 զգալիցամի մմանեալ զ  
 1563 թ.  
 զգանա՛ զ ճաղգոս զ՛ մի՞

Ծանօթ. Մինաս Թոխաթցին յօրինել է մի «Ողբ ի վերայ Հայոց աշխարհին Ուխտաց», որ առաջին անգամ հրատարակեց Հանգ. պրօֆ. Բ. Պատկանեանը. (տես Նշխարք Մատենագրութեան Հայոց, Ս. Պետ. 1884). Թոխաթեցու Ողբը յետոյ հրատարակեցին և յուրիշները (տես Մասիս 1886 և Հանդէս Ամսօր. 1888).

յառաջս նմ ցօսյա զմ  
 յկատար ոմացոց լայն լառի՞  
 ցատ ցատ զմի յասիցէ՛ զմ  
 ցաղախ աս գրոն յամայն քոտիսի:

զմտ ոտաւ՝ յիւնյա տիս ձրմս  
 զիս 15. զԱՍՏ. ԱԿՈՍՅԻ  
 զիցար զձի զյսիքմա՛ զմ  
 զիս ոյ ոյսար ձաց զգլ  
 Ակուաներս Հալի մի չունի.  
 Կուխոստէն լիս չի մնար Հողի,  
 Թէ տամ քաշել, նա կուցա՛ր,  
 Դուք լինէ խրատ կունայք ինձի:

զմաչ զյտոց յա՛ ճար ոմոս  
 Հողիս կ'ելնու Հետ չոր Հացի.  
 Հաւաս չունիմ ես չոր մսի.  
 Զէտ որ ի չակուս կուհասնի,  
 Այ չի մնար ի լիս Հողի:  
 զմաչ ցա՛ զմի զոսոս ոյս ոսիս

Հանց ակուաներ էր կրկի-  
 Իշեր ու ցորեկ չի Հանդի.  
 Ինք Հանդիպի կակուղ մսի.  
 Եւ ազուր կակուղ Հէրիսի:

Եւ զձ ակուայեկ, դու իլահի  
 Ուտես փիլաւ, դաս գու թոնրկի-  
 Դու Հանդիպիս կծու խաշի,  
 Ի ժիր ուտես դու պօրանի,

Պատրան լիմիս դու զիմայի,  
 Որ լնուն ի մէջն երվշտի, բացի՞  
 Յառ ջւղ որ դալ գէրգէր զաղեր,  
 Մարդ չի թողուս, որ ձեռք տանի:

Խեղճ ակռայեկս հաւաս ունի  
Բաթու, դաղու, հաւու մսի,  
Ինք հանդիպի գէր զալիի,  
Մէջն լցած զպուրրայի:

Աղւոր եփած պօրակ լինի  
Մէջնն հակիթ և աղաւնի.  
Ակռայ, լինիս դու արժանի,  
Ուտես գաթայ քեուլի չանի:

Վայր կուժնամ թ'ինչ կուցաւի.  
Եղեր ակռան հիլլաթ ունի.  
Ջէտ որ ի մէկն կուհասնի,  
Խիստ կուխոստէ, թէ մինչ չքաշուի:

Ջիս կուխարէ, թէ չեմ ցաւեր.  
Տեսնաս քանի մի օր անցիր,  
Սիրտս կուպատուի,  
Ջվայն կուտայ խորված մսի:

Յայնչափ պահեմ զքեզ անօթի,  
Սև ակռայեկ ողորմելի,  
Գլուխ դնես դու կորկտի,  
Յետևն լաս դու չոր կտի:

Տեսնաս ոսպով սպանախ եփի.  
Սիրտդ դողայ հետ բակլայի.  
Ճանճ կուզենես լովիասի,  
Հողիդ դողայ հետ սըսըռի:

Որ թէ լինիս աղչապակի  
Եւ քապար խոտ առանց քացխի  
Վայրուխ ունիս դու պատրնճի  
Վայրու լինի մեզ մազայ մուշքի:

Ծեծած ցորեն է քո հոգին,  
Ջէտ որ աղէկ եփած լինի,  
Սյս մէկ ապրիկ ինձ պիտանի  
Ջայն ալ կ'ասես, թ' ինձի պիտի:

Աժնիկ լինիս դու թարխանի,  
Որ պահոց օրերն կուեփվի.  
Գու հանդիպիս անեփ ճօպնի,  
Յետ կացիր, ակազ կուցաւի:

Ս'ուզես, որ ակռատ չի ցաւի,  
Ս'ի ուտեր թթու, կճու և աղի,  
Գու ալ կուտես ինչ հանդիպի,  
Գնա, քաշէ, քեզ չի պիտի:

Ակռայ, քո երեսն մօն լինի.  
Եղուկ ասեր դու վեց տարի.  
Ջէտ որ ի քեզ բան կուհասնի,  
Վայ կուկանչես, խելքդ կ'անցնի:

Հանց կայ քառասուն յիսուն տարի  
Անցնի, խեղճս խղմէթ կ'էնէ.  
Սյս Արդմորդիս նտաֆ չունի,  
Գեռ նախատինք կ'էնէ մեզի:

Խեղճ ակռայեկ ողորմելի,  
Վատ չեմուկեր ես այլ քեզի.  
Կ'ասեմ թէ խեղճ է, կուցաւի  
Ջատ չէ կերեր Հանց զ. տարի:

Գանգատ մ' ունիմ ետ այլ քեզի,  
Թէ դու տէր ետ այտ ակռային,  
Գոյ մի կենարշատ անօթի,  
Ջէտ որ լուսնայ, հաց կեր քեզի:

16. ՎԱՍՆ ՈՒՐԱՆՈՒԹԵՆՆ.

Սիրով ուրախութեան ժամ է, զիտացիր.  
Ճեմելով ճեմելով առիս մօտեցիր.  
Մօտեցիր, մօտեցիր, մօտեցիր:  
Կարօտ եմ խիտ աղւոր տեսող, իմացիր.  
Բազմեալ Հանդէպս և կամ աջ կուսս, մերձեցիր.  
Մերձեցիր, մերձեցիր, մերձեցիր:  
Ի քեզ հային, ամէնքն տան ինձ երանի,  
Եթէ աւեր Հանց վայելուչ սիրելի:  
Սիրելի, սիրելի, սիրելի:  
Միշտ փառաւոր կենաս ի յաջ ամենի,  
Եւ կեանքն քոյ յերկարի, այ իմ նազելի,  
Նազելի, նազելի, նազելի:

Մրգալի վայելուչ ծառ ես, սխրալի,  
Կանանչ կարմիր գունով պճնեալ վարդենի,  
Վարդենի, վարդենի, վարդենի:

Ազգի ազգի գունով զարդարեալ այգի.  
Ծաղկածաւալ և պտղալի նունենի.  
Նունենի, նունենի, նունենի:

Երանական ծորեալ անթառամ աղւոր.  
Ջարմանազան տեսեամբ դու ծառ ահաւոր.  
Ահաւոր, ահաւոր, ահաւոր:

Վարէնքիլ Համատիւր շուշան փառաւոր.  
Ծաղկանցն ամենեցուն իշխան թագաւոր.  
Թագաւոր, թագաւոր, թագաւոր:

Ոսկույն արաբացույ դուտ անապական,  
Եւ ճրագ զիշերոյ ակն պատուական.  
Պատուական, պատուական, պատուական:

Նշդարի նշենի և արմաւենի  
Կանանչ կարմիր գունով մէջ լուրջ տերևի.  
Տերևի, տերևի, տերևի:

Վերստ 17. Ի վերստ ճանաչի.

Յորժամ մտանք թամուզ ամիս,  
Ճանճն շատցաւ ի գլխնիս.  
Երբ զհոտն առին զթէննէքիս,  
Նա թափեցան վերանիս:

Ճանճքս բազում է և անհուն.  
Եւ շուրջ կուգան ցերեկն ի բուն.  
Եւ չեն թողուր, որ լինինք քուն,  
Վաստն թէ գրէ մինչ յերեկուն:

Ճանճն կուգայր տգվրգալով.  
Եւ գուարճանայր նա խնդալով.  
Վերայ թևիս նստէր սիրով,  
Թէ մեզ կարմիր գրէ յուրով:

Բազում և շատ են այս ճանճերս,  
Որ կուկենան ի յայս պատերս.  
Եկան թափան ի գլխրճերս,  
Վ'անհանգիստեն զգրագրներս:

Ճանճն որ նստէր վերայ թևիս,  
Եւ կուխաղայր հետ իմ գլխիս,  
Եթէ քանի՛ բամբասեն զիս.  
Այդ հերիք է, զինչ խօսիս:

Ճանճեր չկայր ի յայս տեղիս.  
Ես կուվախեմ ի կէտօրիս  
Այլի թէ գան նոքա առիս:

Յորժամ զճաշու հացն կերայ,  
Երեք ճանճի հանդիպեցայ:  
Ի ճանճերուն խապար հարցայ,  
Ասցին թէ այլքն այլի կուգայ:

Քունս տարաւ վերայ բարձիս  
Ճանճ թափեցաւ վրայ երեսիս  
Ինչ տի լինիմ ես այս գերիս,  
Վ'անհանգստեն զգրագրներս:

Ի վայ թէ քանի՛ զրուցեմ,  
Յայս ճանճերուս դանկատ առնեմ.  
Մի՛ մեղադրէք, զէմ ես ծուռ չեմ.  
Կունեղացնեն, ես ինչ անեմ:

Ճանճերն ամէն յիրար եկան,  
Եւ հետ ինձի տալի եղան.  
Ղալամ թրաշին խելքն մտան,  
Ձճեռքս խոցեց զէտ չար գազան:

Ղալամթրաշս ինձ նենդեց.  
Եւ այն պիղծ ճանճերուն լսեց.  
Ի վեր եկաց, զճեռքս խոցեց,  
Թէ իմ տէրս սուտ զրուցեց:

սոյք ցօս Եւ կուանեմ զալէմթրաշիս,  
 սոյքմոս սիւս մի լսեր այս պիղծ ճանճի,  
 սոյք Թէպէտ նոքա նեղացենն զիս,  
 :սոյտա է՞ր կուկտրես դու զիմ ձեռքիս:

Ղալամթրանշ իմ նենգաւոր,  
 ճանճին եղար խորհրդաւոր,  
 է՞ր կուկենաս հետ իս ժիւոր,  
 Զմատս խաճեր զինչ թիւնաւոր:

Իուն է մտեր ներքին թւիս.  
 Ե՛խ աս աճրգեր եմ ճանճերուս  
 Եւ կուուտէ զմիս մարմնոյս,  
 Լուն այլ եղև ինձ տարեկոյս:

Լուերն ամէն ինձ բարկացան,  
 Վերայ մարմնոյս իմ թափեցան,  
 Քան զկոտ մի հունտ այլ շատցան  
 Զէտ զճանճերն և այլ գազան:

Յետեւ զայլի միտս մղծծման  
 մարմնեւորք է օր չորեքշաբթիս,  
 մառն մճանճերն ամէն եկան առ իս,  
 :մաքար դաթէ շատ գրէ, որ խալսիս,  
 Ղիրինն եկաւ ի մեր գրովիս:

Գործիս մտածման ծրոյս միտս  
 Եւ կուկենաս հետ իս ժիւոր,  
 Զմատս խաճեր զինչ թիւնաւոր:

մտածման ծրոյս միտս  
 :մառն մճանճերն ամէն եկան առ իս,  
 :մաքար դաթէ շատ գրէ, որ խալսիս,

Թէ Հարցանեմք ի Սուրբ Դրօշն,  
 Գարշ և զազիր ասէ զթութուն.  
 Արպէս մեղուն փախչի ծխոյն,  
 Նոյնպէս Հրեշտակն այն պիղծ հոտոյն:

Ով ոք սուր է ի թութուն,  
 Բազում վնաս գործէ հողւոյն.  
 Վնաս հողւոյն և վիշտ մարմնոյն,  
 Զեռօքն աւեր առնէ իւր տուն:

Չատ մարդ շիւար կան և երերուն.  
 Ոչինչ ունին ի տան յանկին.  
 Փող մի չունին, որ տան հողւոյն,  
 Երթան պարտօք գնեն զթութուն:

Ոմանք նմանին ի քաղցեալ շուն,  
 Որ կուշրջին ի տանէ տուն.  
 Հոտ հանելով գտնուն զթութուն,  
 Զմտխիրն տայ վեր իւր գլխոյն:

Ոմանք սուրբ են ի խմելուն,  
 Արպէս գորդալինին անքուն.  
 Զտիւ և զգիշեր մաւրաւորուն,  
 Ոչ գաղարին խմեն զթութուն:

Սիրտ սեւացեր է մէջ փորուն.  
Հոգին զրկեալ է ի լուսուն.  
Բնաւ չիշէ նա դօր մահուն,  
Եւ ոչ խնդրէ արքայութիւն:

Չատ մարդ հպարտ նորա սիրոյն  
Զապրանքն կեր կուտայ հրոյն,  
Գողնայ ի տանէ և գնէ թուլութուն,  
Երթայ խմէ հետ այլազգոյն:

Ծուխ կուհանեն ի քթերոյն,  
Ըզսւ օձն ի բերանոյն.  
Վայ է հաղար նոցա հոգւոյն,  
Որ կատարեն զկամքն զիւրոյն:

Ոմանք նստին մէջ սեղանոյն,  
Յառաջ բերեն նոքա զթուլութուն.  
Յօժար խմեն հետ քթերուն,  
Բերնով շնան հետ այլազգոյն:

Թէ ոք դառնայ ի չար գործոյն,  
Ի շնալոյն և ի քրֆրոյն,  
Եւ ոչ խմէ ինքն թուլութուն,  
Փութով գտնէ զթողութիւն:

Սիրով ցանկայ աղօթելոյն,  
Ն ողորմութիւն տայ որբերուն,  
Նա ազատի անշէջ հրոյն  
Եւ ժառանգէ վարքայութիւն.

Իսկ թէ անդարձ մնան ի նոյն,  
Ոչ գտանեն զթողութիւն,  
Այլ կերակուր լինին որդոյն,  
Զոր սնուցին խմելով զթուլութուն:

Բայց դուք, որդիք արքայութեան,  
Մի առնէք զձեզ տուն չարութեան,  
Խմելով զթուլութունն զաղրութեան,  
Ն անմասն լինել հողորդութեան:

Քանզի բերանն այն դարշութեան,  
Որ խմէ զթուլութուն պղծութեան,  
Նա չէ արժան հաղորդութեան,  
Որչափ է յայն սովորութեան:

Այլ օրհնութիւնն աստուածական  
Լիցի ի յայն մարդոյն վերան,  
Որ շուտ դառնայ յայն չարութեան,  
Խնդրող լինի արքայութեան:

մյոս զ մամն հղարմա յի վե

19. ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ԱԶՆԻԻ.

մյոս զ մամն հղարմա յի վե

մամ յոճի իոյմեոյ միջլոմն զոճ

Աւաղ մեզ հալիլ պիտի

Այն արևն, որ լոյս կըծագէ,

Ջատ կայ ի յարև նման

Իբր ճղին վերայ կուվագէ:

մամ յոճի իոյմեոյ միջլոմն զոճ

Իիտուն մարդն արև նման.

մամ յոճի իոյմեոյ միջլոմն զոճ

խօսքն զէտ արև կուծագէ.

մամ յոճի իոյմեոյ միջլոմն զոճ

Անգէտ մարդն օճու նման.

մամ յոճի իոյմեոյ միջլոմն զոճ

Հանապազ զմարդն կուխոցէ:

մամ յոճի իոյմեոյ միջլոմն զոճ

Մարդ կայ, որ հազար աժէ.

Հազար կայ, որ մէկ մի չաժէ.

Այն մարդ, որ հազար աժէ,

Անգէտին քով փող մի չաժէ.

մամ յոճի իոյմեոյ միջլոմն զոճ

\* Բազան ի յանտառ մորին

Թէպէտ բու թէպէտ բազայ է.

Ճօհարն ի ծովին միջին

Թէպէտ քար թէպէտ ճօհար է:

\* Խելօքն անգէտին ի մօտ

Միտք արէք, թէ ինչ նման է.

Ճրագն ի յառջև կուրին

Կուվառի, ինքն չի գիտէ:

Խելօքն է ի ծով նման,

Որ քանի չափեն, նա տանի.

Անգէտն է ի տիկ նման,

Չափ մի աւել չնուն, կուվատուի:

Աշխարհու ի տօլապ նման,

Որն ի վեր ի վայր թաւալի.

Վերին այլ ի վայր դառնայ,

Որ վարին ի վեր թաւալի:

\* Աշխարհս է կանանց մարգեր.

Մեք ի մէջն եմք կաքու ճագեր.

Գրօզն այլ բազայ եղեր,

Կուկրէ մէկ մէկ դար ի վեր:

\* Մանկտիք, երբ ի հաց նստիք,

Չէնեցէք աղքատք ձեզ ընկեր.

Մեռնիք, ի յանդէն երթայք,

Կունստիք քանց մէկ այլ ի վեր:

\* Մարդն, որ օտար տեղ երթայ,

Ջատ մի խելք նորա պիտենայ.

Ամէն մարդու ցած կենայ,

Ապա իւր բանին լինենայ:

Ջատ թագաւորաց մեծաց,

Իմաստնոյ արանց լսեցի,

Թէ անչափ չկշտանայ մարդ

Ատնւորէս, մինչ որ մեռանի:

Տանին գերեզման դնեն,  
 Եւ հողովն իւր աչքն լցուի,  
 Ապա փոշիմանի, ասէ,  
 Թէ հերիք է, այլ չի պիտի:

\* Այս օր հետ՝ ես ինչ արի,  
 Չէ արեր Ադամայ որդի,  
 Որ շիշէ մի հալած ոսկի  
 Ի գետինն ի վայր թափեցի:

Հաղարձի վազան բերի,  
 Վաղցուցի, այլ ոչ հասուցի.  
 Ինչ շահ իմ լետին խելաց,  
 Երբ առջի անունն աւերի:

Մէկ մարդ մի ճօհար ունէր.  
 Ի խելաց պահել չի կարաց,  
 Մինչ խելք ի վերան եկաւ,  
 Նա գնաց ճօհարն ի ձեռաց:

Գնաց, ինքն ի վայր նստաւ,  
 Ողորմուկ մի խիստ շատ իլաց.  
 Նորա լացն այլ ինչ շահ է,  
 Յերբ գնաց ճօհարն ի ձեռաց:

Ծանօթ. Այս տարին օրինակուեցաւ 1695 թուին  
 գրած տաղարանից. մեզ այնպէս է երևում, որ սա վերջա-  
 ցած չէ, միևնույն ժամանակ և աւելի հին է, քան չիշեալ  
 թուականը: 1583 թուին օրինակուած մի երգի մէջ կան

այս տողից հատուածներ. տես Հայերգ եր. Ժբ. և 31. Այդ  
 հանգամանքն և առիթ է տալիս մեզ որոնելու առընչու-  
 թիւնը մեր առաջարկած երգի և Հայերգի օրինակի մէջ:  
 Ով որ ծանօթ է Հայոց ժողովրդական երգերի և առհասա-  
 րակ ժողովրդական բարբառի ոգուն, նա չի կարող չխոս-  
 տովանել, որ այդ երկու երգերն էլ կրում են իրենց վերայ  
 պարզ ժողովրդականութեան դրոշմ, և շատ աւելի հին են  
 քան չիշեալ թուականները: 1583-ին օրինակուած երգի  
 հեղինակ համարում է Վասպուրականի Խտակունիս գիւ-  
 ղացի աշուղ Նահապետը, որի մականունն է Քուչակ. 1637-  
 ին սորա թողը, որ նույնպէս կոչուել է Քուչակ, մի չիշա-  
 տակարանի մէջ ասում է, որ Նահապետը իւր «մեծ պապն»  
 է: Եթէ ընդունենք, որ Նահապետը Քուչակի պապի հայրը  
 կամ պապի պապն է (այլ ոչ հօր կամ մօր հայրը), աչն  
 ժամանակ կրհետեւի, որ նա ապրել է Փջ. դարի սկզբներում.  
 ուրեմն նորա անունով մնացած երգը, որ օրինակուած է  
 1583 թուին, աւելի հին է: Նահապետի երգի վերնագիրն է  
 «չաղազս հողուչ և սիրոյ ոտանաւոր է բանս». իսկ առաջին  
 տողի խօսքերն են «Այս ծովական գիշերս ի բուն ես եր-  
 կու շրջան մանեցի»: Արդ, եթէ համեմատելու լինինք մեր  
 առաջարկած երգը, որ օրինակել ենք 1695-ին գրած տա-  
 ղարանից, Նահապետի երգի հետ, կ'երևի, որ նոքա ծագ-  
 մամբ իրարու ժամանակակից են: Գրէթէ բառացի իրարու  
 նման են հետեւեալ հատուածները, որ համեմատութեան  
 համար բաղում ենք Հայերգից.

Բազան ի յանտառ մորին թէպէտ բու թէպէտ բազայ է.  
 Գուհարն ի ծովին միջին թէպէտ քար թէպէտ գուհար է.  
 Խելօք ի յանդէտն ի մօտ մտիկ արէք թէ ինչ նման է,  
 Զրագն ի կուրին առջև կուվառի, ինքն չգիտէ: (եր. 31)

Զինչ որ ես հետ ինձ արի, չէր արեր ոչ ոք հարամի,

Ջիշայ մի հարած ոսկի ի գետին ի վար վաթեցի.  
Անցաւ ի գետնին ներքև, ես դարտարկ ի վար մնացի.  
Ինչ անեմ չետի անուէն, երբ առաջի անուէն աւերի. (եր. 31)

Մարդն որ ի խարխուլութիւն երթայ, զէմ նորա շատ  
խելք պիտենայ.  
Քան զամէնն ցած կենայ, հապա թէ իւր բանն կուլենայ.

Մտիկ գուն ճառին արան, թէ քանի հիւնէր կայ ի նայ,  
Այն ճիւղ որ գպտուղն ունի, քան զգարտակն չէր ցած  
կուկենայ. (եր. 33).

Աշխարհս է կանանց մարգեր, մենք ի մէջն ենք կաբոյ  
ձագեր.  
Գրօղն այ բաժան ընկեր ու կրէ մէկ մէկ զէպի վեր.

Եղբարք երբ ի հաց նստեք, ձէնեցէք ձեզ մէկ մ' այ ընկեր,  
Մեանիմք ի յանդէն երթամք, նա նստեմք քան զմէկ  
մ' այ ի վեր. (եր. 42)

Այ տների նմանութիւնը մեր առաջարկած օրինակի  
աստղանիչ տների հատ ակներն է: Ինչ որ կը վերաբերի  
Նահապետի անուևով յայտնի երգի միւս մասերին, կարող  
ենք ասել, որ նոքա առհասարակ ժողովրդական երգից  
առած կտորներ են և Նահապետն իսկապէս ժողովրդ է  
այդ մասերի, այ ոչ հեղինակ: Կան կտորներ, որոնց հնու-  
թիւնը հասնում է մինչև ժ. դարը. գործիւնակ՝

Հանչեմ այս ծովից վրայ  
Ծովից ի չակէն թանաք դառնայ:  
Զինչ ի շամբ եղէզ որ կայ,  
Ամէնն ինձ գրիչ պիտենայ:  
Զինչ էրէց ու խաբեղաց  
Դանուշման, որ գիր գիտենայ.

Գրէ, չկրնայ կարգալ  
Զինչ ի չիմ սիրտս կայ զուսայ. (եր. 39)

Այս տողերն համեմատելու է Մ. Գրիգոր Նարեկացու  
Թ.՝րդ աղօթքի հետևեալ տողերի հետ.

«Եթէ զլիճ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ չեղե-  
ղեցից, և զգաշոտ ասպարիսօք բազմօք սահմանեալ՝  
ի տարածումն լայնութեան քարղենի չափեցից, և  
զպուրակս յողունց անտառաց եղեղանց ի հատուածս  
գոչութեան գրչաց կազմեցից, և ոչ զթիւ մի ի բար-  
դելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ գրով սահմանի  
գրաւել.»

Ձենք կարծում, որ Նահապետի լուսքերի նմանու-  
թիւնը Նարեկացու այս տողերին մի պատահական զուգա-  
լիպութիւն լինի. թէև դժուար չէ մտածել, որ Նահա-  
պետը երգած լինի Նարեկացու մտքերի ազդեցութեան  
տակ, միայն ինչ համեմատութիւն զղջման և ապաշխարու-  
թեան գաղափարի և սիրահարական զգացմունքների մէջ.  
Նարեկացին ասում է, որ եթէ ծովը թանաք դառնար,  
դաշտերը մագաղաթ դառնային և ծառերն ու եղէգները  
զրիչ դառնային, դարձեալ ինքը չպիտի կարողանար գրի  
առնել զոնէ մի մասն իւր մեղքերի. իսկ Նահապետն  
ասում է, որ եթէ ծովը թանաք դառնար և շամբերումն  
ինչ որ եղէզ կայ, բոլորն էլ գրիչ դառնային և ինչ որ  
գրազէտ մարդ կայ, բոլորն էլ գրելու լինէին, դարձեալ  
չպիտի կարողանային կարգալ այն ամէնն ինչ որ ինքն  
իւր սրտում գգում է զէպի իւր սիրականը: Մենք կարծում  
ենք, որ թէ Նարեկացու և թէ Նահապետի համար մի  
երրորդ աղբիւր կայ այդպիսի նմանութիւններ քաղելու և  
կրկնելու, և այդ աղբիւրն է ժողովրդական երգը կամ ա-

լանդուլթիւնը, որի ազդեցութեան տակ և միանման է դուրս եկել երկուսի արտաշայտութիւնը:

Նահապետի երգի մէջ կան և կտորներ, որոնք նման են արդի ժողովրդական երգերին, ցանկացողը կարող է համեմատել վիճակի, ծաղկի և սիրոյ երգերի հետ (ջանգիւլուճ, Զուլօ և այլն) հետեւեալ հատուածները:

«Մտիկ իմ ետրին արէք, զինչ հագեր, ամէնն է կանանչ:  
Հագեր գոյն գոյն կանայ, կոճակ շարեր, ու օղակն է  
Ետեր ու պաղջան մտեր, ջուր կ'երթայ, եգերն է կանանչ:  
Մտիկ ճառերուն արէք, ծառն ծաղկեր, տերևն է կանանչ:»

«Ջուր վլլլալէն կուգաս, գետի թորակնէն կուգաս,  
երթաս այլ ձորերդ ի վայր, ձայնդ կայ ու դուն չերևաս,  
Գիտեմ սիրու տէր ես դուն, ի օտար աշխարհ կուգնաս,  
երթաս ու սիրուդ հասնիս, գիշերն ի քուն չլինաս:»

«Դու ո՞վ ես որ յերգիկդ ես ելեր, գայդ օտար հողդ  
կուկոխես,  
Թէ վարդ ես նէ, վար եկո՞, թէ օտար ծաղիկ, նա գնա.  
Ո՞չ վարդ եմ ի վար գալու, ո՞չ օտար ծաղիկ գնալու.  
Եկեր եմ սիրուդ առեր, ոչ գալու եմ ոչ գնալու:»

«Իմ ետր, դու յերգիկն ի քուն, ծոցդ լոյս տայր աստղե-  
րուն,  
Կամ ան զիս ի ծոցդ ի քուն, կամ տէսթուր անըր երթամ  
Ոչ կ'աւնում ի ծոցս ի քուն, ոչ տէսթուր տամ երթաս  
անցեղ երերուն պահեմ, մինչ որ գայ լոյս ասաւօտուն:»

Յինչ ես եղներ ու գեղներ, երեսիդ գոյն գնացեր, Կաթ  
Գէմ քո ետրն չէ մեներ, կամ օտար երկիր դնացեր, մտ  
Թէ լամ նէ, թո՞ղ ես լամ, ես գիտեմ թէ քինչ եմ  
կորուսեր,  
Ելեր եմ հոգւոյն հոգին, անհոգի ի վար մնացեր:»

«Նահապետի անուևով մնացած այս նշանաւոր երգի մանրամասն ուսումնասիրութիւնն անշուշտ աւելի հետաքրքիր կըլինի, երբ հնար լինի զանազան ձեռագրների համեմատութեամբ հանդէս բերել մի աւելի ճիշդ օրինակ: Ինչքան որ հայերգի օրինակից կարելի է եղրակացնել, այդ տողը խառն ի խառն դասաւորութիւն ունի. կան մասեր, որոնք կապ չունին ամբողջի հետ, ինչպէս է, «Գաբրիէլ իջեալ յերկնից և սբոյ կուսին աւետեաց» և այլ միքանի տները, որոնք արդէն կրօնական բնաւորութիւն ունին և սիրոյ կամ բնութեան պատկերների հետ չունին գրէթէ առնչութիւն և, կարծես, պատահաբար հիւսուել են Նահապետի տաղի մէջ: Կան և այնպիսի մասեր, որոնք խրատական բնաւորութիւն ունին և չիշեցնում են բոլորովին այլ խնդիրներ. ինչպէս են օրինակ հայերէն երգելու, հաւատի հաստատութեան և ազգային աւանդութիւնների սքեթեան մասին հիւսուած տները, այսպէս են.

«Նստեր է ծառի շքին, կըլամէ զիւր լուրջ ապիկին,  
Կըլամէ ու հայերէն կ'ասէ, թէ ինչ անուշ է սէրն ու  
գինին»:  
«Կ'ասեմ հայերէն ասա, թէ չէ ես ասեմ, դուն լսէ,  
Զբերանդ ալ բենով աճէ, ու պականջդ ալ ի դոց դու  
պահէ...»

«Պիտէր կաթ մի չաչն գինուէն, որ խմեց Ենովբ-Եղլա.  
Խմեց տէր Գրիգորն Հացոց, ասաց Ես Հանգաց.  
Հնչ երամ, դուք էր կուլայք, գիտէք, որ ձեր Տէրն տի  
գայ.  
Չատոց մթան լոյս արեր, կուվախէք թէ ձերն ուշանայ:»

«Հաւատն անառիկ բերդիկ, ով առնէ զնա Հայրենիք,  
Թէպէտ թշնամիք ունի, որ բերեն ինձ շատ մրձենիք,  
Թշնամին հեծել կապէ, կուլինայ ի նա նետածիգ,  
Նա զնա մասխարայ զնէ, թքանէ զէտ զիմաճիք:»

«Փամ ժամ զիմ խարիպութիւնս յետ չիշեմ, ու նստեմ ու լամ.  
Ճապղեր եմ ջրի նման, ի չօտար երկիր կուգնամ.  
Ցորեկն եմ նետի նման, զով տեսնում ի դէմ կուգնամ.  
Գիշերն աղեղան նման, ես լարթաի ի վար կուճնամ:»

«Նահապետի թողը Քուչակ Վանեցին, որ ինչպէս  
տեսանք, ասրել է թի. դարում, երգել է «Գուգալ մ' ես  
երէկ տեսայ» երգը, որին մասին տես Բ. սրբի:




Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	Տող	Տպուած է	Փոխանակ
Ե	13 ներ.	պատմութեանց	պատմութեան
Զ	7 վեր.	այժս	այժմ
9	2 "	աւիտիս	աւետիս
11	13 "	բարի պատուական	բարի և պատուական
18	8 "	արքայ որդի»	արքայորդի»
26	11 "	Գաջ	Խաչ.
26	13 ներ.	Գ.	Պ.
33	5 "	զտէրն	զՏէրն
34	2 "	Ի Հուտկարէն	Ի Հոնտկարէն
43	8 "	Քէքըլիկն	Բէքըլիկն
43	1 "	առէ	առնէ
46	6 "	քաշ	քաշեր
47	6 վեր.	զայ,	զամ,
50	11 "	քեզ	քեզի
57	7 ներ.	զաս զու	զասզու
58	6 վեր.	Մէջնն	Մէջն
72	16 ներ.	նստեք,	նստիք,
72	5 "	Ծովիզ	Ծովզ
74	1 "	ա նցեզ	Հանցեզ
75	5 վեր.	Ելեր եմ	Ելեր իմ
76	1 ներ.	որին	որի

Պ Յ Ը Թ Զ Թ Կ Գ Ի

Փ Թ Կ Գ Ի	Զ Թ Կ Գ Ի	Թ Կ Գ Ի	Կ Գ Ի
Պատմություն	Պատմություն	13 թիվ	9
Գրականություն	Գրականություն	7 թիվ	8
Մատենադարան	Մատենադարան	2	9
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	13	11
Պատմություն	Պատմություն	8	18
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	11	28
Պատմություն	Պատմություն	13 թիվ	38
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	5	33
Պատմություն	Պատմություն	2	41
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	8	43
Պատմություն	Պատմություն	1	43
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	6	46
Պատմություն	Պատմություն	6 թիվ	47
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	11	60
Պատմություն	Պատմություն	7 թիվ	71
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	6 թիվ	88
Պատմություն	Պատմություն	16 թիվ	72
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	5	72
Պատմություն	Պատմություն	1	74
Գրքերի ցուցակ	Գրքերի ցուցակ	5 թիվ	78
Պատմություն	Պատմություն	1 թիվ	86



« Ազգային գրադարան »

NL0360405

Կ. ԿՈՍՏԱՆԵՍՏՆՅԻ ՄԻՒՍ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Հիւսուած բանից նախնի պատմագրաց հացոց. երեք գիրք,  
Վիէննա 1877.

հացոց հեթանոսական կրօնը. Վաղարշապատ 1879.

Ստեփ. Օրպէլեանի Ողբ ի ս. Կաթողիկէ Էջմիածնի, Թիֆ-  
լիս 1885.

Հացոց վանքերը. Մոսկով 1886.

Թովմա Մեծոփեցու լիշատակարանը, Թիֆլիս 1892

Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը, Թիֆլիս 1892.

Դ \* \* \* Գ \* \* \* Ե \* \* \*

Գրաբառի խոնարհումը, մի աղիւսակի մէջ, Թիֆլիս 1881.

Գրաբառի հոլովումը, Թիֆլիս 1881.

Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բանից, յերիս շրջանս,  
Թիֆլիս 1881.

Ծաղկաքաղ, առաջին շրջան. Բ. տիպ, Թիֆլիս 1885.

Բառացուցակ առաջ. շրջ. ճաղկ. համար, Թիֆլիս 1885.

Նախաշաւիղ, Թիֆլիս 1886.

Գինն է 20 կոպէկ

